

## ԹՈՒՐՔԻԱ ՄՊԱՌԱՑԱԾ Է ԱՐԺԱՆԹԻՆԻՆ

Թուրքիոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը տարածած է յայտարարութիւն մը, որ կը դատապարտէ Արժանթին Մերակոյտի որոշումը՝ Հայոց Յեղասպանութեան հարցի կապակցութեամբ:

Յայտարարութեան մէջ ըսուած է, «Թուրքիա կը դատապարտէ եւ կը մերժուի մեղադրանքները Յեղասպանութիւն գործելու վերաբերեալ, բան մը որ անհիմն է իրաւական եւ պատմական տեսանկիւնէն»:

Դեկտեմբեր 13-ին Մերակոյտը հետեւելով Խորհրդարանի օրինակին, որոշած էր Ապրիլ 24-ը Արժանթինի մէջ ընդունիլ որպէս «ազգերու միջեւ փոխադարձ յարգանքի եւ հանդուրժողականութեան օր», իսկ հաջորդ ուսանողներուն եւ պետական պաշտօնեաներուն համար այդ օրը սահմանել ոչ աշխատանքային:

«Թրեմը» գործակալութեան համաձայն, Թուրքիա Արժանթինի տեղեկացուցած է, որ որոշումը բացասական կերպով կ'ազդէ երկու երկիրներու յարաբերութիւններուն վրայ, յոյս չայտնելով, որ Արժանթինի նախագահը «կը ցուցաբերէ անհրաժեշտ խելամուտութիւն» եւ չի վաւերացներ որոշումը:

## ԵՐԱՆՈՐՇՈՒՐԴԻՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼԷ ԱՍԴԻՆ ՇԱՅԱՍԱՆԻ ՄԵՋ ՈՉ ՄԵԿ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՐԴԱՐ ՉԷ ԵՂԱԾ

Եւրախորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի (ԵԽԽՎ) հսկիչ յանձնաժողովի անցեալ շաբաթ Փարիզի մէջ ընդունած՝ Հայաստանի մասին զեկոյցի նախագծին մէջ կը յայտնուի, որ Եւրախորհուրդին անդամակցելէ յետոյ Հայաստանի մէջ որեւէ ընտրութիւն ազատ եւ արդար չի նկատուիր: Այս մասին «Ազատութիւն» ռատիոկայանին յայտնած է յանձնաժողովի անդամ, Հայաստանի Ազգային ժողովի «Արդարութիւն» խմբակցութեան ղեկավար եւ Հայաստանի ժողովրդական կուսակցութեան նախագահ Ստեփան Դեմիրճեան, որ նոր վերադարձած է Փարիզէն:

ԵԽԽՎ-ի Նիստին ելոյթ ունեցած է նաեւ Ստեփան Դեմիրճեան եւ մասնաւորապէս ըսած է, որ «չնայած Եւրոպայի Խորհրդի պահանջներին՝ պատասխանատուութեան ենթարկել կեղծարարներին, եթէր տրամադրել «Ա1+»-ին, այդպէս էլ որեւէ քայլ չկատարուեց»:

«Որպէսզի մարդիկ հաւատ ունենան ապագայ ընտրութիւնների նկատմամբ, պէտք են առարկայական քայլեր, ոչ թէ վերացական խօսակցութիւններ արդար ընտրութիւնների մասին», - ըսած է ընդդիմադիր գործիչը:

Եւրախորհուրդի Խորհրդարանական վեհաժողովի հսկիչ յանձնաժողովը իր զեկոյցի նախագիծին մէջ, որ Յունուարին պիտի ներկայացուի վեհաժողովի վաւերացման, գգուշացում կայ Հայաստանի իշխանութիւններուն, որ յառաջիկայ ընտրութիւնները պէտք է համապատասխանեն եւրոպական չափանիշներուն:

«Հայաստանը այժմ պէտք է ցոյց տայ, թէ ինչ առաջընթաց է գրանցել ժողովրդավարութեան եւ եւրոպական ինտեգրացիայի ճանապարհին. գալիք ընտրութիւնները պէտք է համապատասխանեն ազատ եւ արդար ընտրութիւններու եւրոպական չափանիշներուն, իսկ ընտրական քարոզարշաւի եւ ընտրութիւններու լուսաբանումը մամուլէն ներս պէտք է ըլլայ բազմակարծիք եւ անկողմնակալ», - ըսուած է զեկոյցի նախագծին մէջ:

## ՇԱՅԱՍԱՆԻ ՀԱՐՔ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿՐԻՄԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԷ

Հայաստանի շաբաթ մը ընդդիմադիր կուսակցութիւնները համախմբող «Հակաքրէական Շարժումը» Դեկտեմբերի 19-ին հանդէս եկաւ խիստ յայտարարութեամբ մը, դատապարտելով իշխանութիւններու վերջին շրջանի գործելաճանճը:

«ՀՀ գործող՝ ոչ լեգիտիմ իշխանութիւնները չեն կարողանայ արմատաւորել ահաբեկութեան եւ վախի մթնոլորտ, նրանց կողմից մշակուած ծրագիրը ի սկզբանէ դատապարտուած է ձախողման: Ներքաղաքական սրացումների տրամաբանութիւնն ու բոլոր փաստարկները ցոյց են տալիս, որ ՀՀ դեռեւս գործող իշխանութիւնների կողմից վարուած է ազգային շահերին եւ երկրի համապարփակ անվտանգութեանը հակասող քաղաքականութիւն: Հետեւաբար մենք խստագոյնս դատապարտում ենք իշխանութիւնների արկածախնդիր գործելակերպն ու դրանից բխող սադրիչ գործողութիւնները», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Ընդդիմադիրներու կարծիքով, շրջանակներով երկրի ներքաղաքական իրավիճակը, փորձ կը կատարուի համոզելու միջազգային կառույցները, թէ Ղարաբաղի հարցը ի գործ է կարգաւորել միայն Քոչարեան-Սարգսեան զոյգը:

## ՉՔԵՂ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԻ ՇԱՅԱՍԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 15-ԱՄԵԱԿՆ ՈՒ ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ԸԻՊԱՏՈՍԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Երկուշաբթի Դեկտեմբեր 18ի երեկոյեան, Պէվրըլի Հիլզի Le Meridien հիւրանոցին մէջ շաբաթ ընդունելութեամբ մը նշուեցաւ Հայաստանի անկախութեան 15-ամեակն ու Լոս Անճելոսի մօտ Հ.Հ. Աւագ Հիւպատոս Տիար Արմէն Լիլոյեանի նոր պաշտօնի կոչուիլը:

Այս բարեբաստիկ գոյգ առիթները միասնաբար նշելու եկած էին գաղութիա երեք յարանուանութեանց հոգեւոր առաջնորդները, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան եւ Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի անդամներ, ինչպէս նաեւ քաղաքական, մարզական, մշակութային, բարեսիրական կազմակերպութիւններու եւ մամուլի ներկայացուցիչներ, օտար դիւանագէտներ, պետական ու քաղաքային անձնաւորութիւններ:

Գեղազարդ սրահէն ներս կը տիրապետէր տօնական ուրախ



Հ.Հ. Աւագ Հիւպատոս Արմէն Լիլոյեան  
 մթնոլորտ: Ներկաներուն անձամբ դիմաւորեց նորանշանակ երիտա-

## ՆՈՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՄՈՒՏՔԸ ՇԱՅԱՍԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԾԱՐՔԵՐԵՆ ՆԵՐՍ

Դեկտեմբերի 17-ին Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տիարունի» երիտասարդական-ուսանողական Միութեան Երեւանի գրասենեակում տեղի ունեցաւ նորագիր Հնչակեանների երգման արարողութիւն: 20 երիտասարդներ՝ ամենատարբեր ոլորտների ներկայացուցիչներ, ովքեր մուտք էին գործում Տիարունիականների շաբաթը, երգուեցին «ամենուր ու միշտ բարձր պահել Հնչակեան Կուսակցութեան վարկն ու հեղինակութիւնը, լինել կարգապահ ու կատարել Կուսակցութեան հրահանգներն ու որոշումները»:

Օծման արարողութեանը ներկայ էին Ս.Դ.Հ.Կ. Կենտրոնական վարչութեան անդամ ընկեր Սամուէլ Յակոբեանը, Ս.Դ.Հ.Կ. Հայաստանի վարչութեան ատենապետ ընկերուհի Լիլոյեան Սարգսեանը եւ վարչութեան ատենադպիր ընկեր Ալբերտ Գաբրիէլեանը, ովքեր երաշխաւորեցին Հնչակեան Կուսակցութիւն մուտք գործել ցանկացողներին: Արարողութեան կնքահայրն էր Ս.Դ.Հ.Կ. Լիբանանի վարիչ մարմնի ատենապետ ընկեր Տօթթ. Մաթակ Փոլադեանը:

Ս.Դ.Հ.Կ. «Սարգիս Տիարունի» երիտասարդական-ուսանողական միութեան ատենապետ ընկեր Նարեկ Գալստեանը բարի երթ մաղթեց երիտասարդներին, ցանկացաւ նրանց արգասաբեր աշխատանք:

Ընկեր Գալստեան առանց վերապահումների ասաց, որ նորընծայ Տիարունիականները այդուհետ ընդունուած են ու դառնուած են մի մեծ ու ջերմ ընտանիքի անդամներ:

Ընկեր Փոլադեան ողջունեց օծման արարողութեան մասնակիցներին ու նշեց, որ Հնչակեանների ուղին հարթ ու խաղաղ չէ, այլ փշոտ ու քարքարոտ: Նա աւելացրեց, որ գալիք տարին բաւական կարեւոր ու նշանակալից է հայ ժողովրդի ու յատկապէս Հնչակեան Կուսակցութեան համար, քանզի լրանուած է Կուսակցութեան 120-ամեակն ու հայրենադարձութեան 60-ամեակը:

Ընկերուհի Լիլոյեան Սարգսեանն իր խօսքում նշեց, որ Հնչակեանների համար կարեւորը ոչ թէ քանակն է, այլ որակը, կարեւորն այն է, թէ քանի անգամ կ'ուսենայ Կուսակցութիւնը, կարեւորն այն է, թէ ինչպիսի աշխատանքներ կը կատարուեն այդ կուսակցութիւնում: Ընկերուհի Սարգսեան աւելացրեց, որ Հնչակեան Կուսակցութիւն մտնողները նուիրուած են, եւ որ այստեղ չկան շահեր՝ այլ կայ հայրենիքին ու Կուսակցութեան գաղափարախօսութեան անձնուէր ծառայութիւն:

120-ամեայ պատմութիւն ունեցող, հայ ժողովրդի թիկունքում միշտ կանգնած Հնչակեան Կուսակցութիւնը համալրուեց եւս 20 անդամներով:

### ՇՆՈՐՀԱԻՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

«Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու վարչական կազմը ջերմօրէն կը շնորհաւորեն հայ Կաթողիկէ համայնքը ընդհանրապէս եւ իր ընթերցողները՝ մասնաւորապէս Քրիստոսի Սուրբ Ծնունդի տօնի առթիւ, մաղթելով բոլորին խաղաղ, բարգաւաճ եւ երջանիկ տարի:

\*\*\*\*\*

Արհիպապատիւ Մանուէլ Եպս. Պաթագեանի  
 Սուրբ Ծնունդի պատգամը էջ 6

# ԱՆՅԱՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ԱՂ ՈՒ ՄՈՍ ՊԱՇՏԵՔ

Այն, որ Հայաստանի տնտեսութեան վիճակը, չնայած փայլատակող ցուցանիշներին, մեղմ ասած, լաւ չէ, արդէն չեն թաքցնում անգամ իշխանութեան ներկայացուցիչները:

Տնտեսութեան աճի ցուցանիշը ապահովուում է շինարարութեան հաշուին, իսկ բնակչութիւնը ապրում է մասնաւոր տրանսֆերտների (փոխանցումների) եւ տնտեսութեան վրայ դրա թողած էֆէկտի հաշուին: Այլ կերպ ասած, մեր տնտեսութիւնը արդէն մի քանի տարի է, ինչ գտնուում է, պատկերաւոր ասած, խոր որակական ճգնաժամում, սակայն քանակական տեսանկիւնից ճգնաժամի թէկուզ ոչ այնքան ակնառու դրսեւորումները կամաց-կամաց ի յայտ են գալիս միայն այժմ:

Ու, ըստ ամենայնի, գնալով դրանք աւելի ու աւելի ակնառու են դառնալու: Որպէսզի գոնէ մօտաւոր կանխատեսումներ արուեն, թէ ինչ է սպասուում մեր տնտեսութեանը առաջիկայ մի քանի տարիներին, մի հզօր ու մասնագիտացուած ինստիտուտ պէտք է երկարատեւ աշխատի: Ընդ որում, այդ ինստիտուտը պէտք է լինի բոլորովին անկախ, որպէսզի ուսումնասիրութիւնն էլ լինի օբիեկտիւ:

ՀՀ-ում, ցաւօք, նման ինստիտուտներ չկան: Բայց միամտութիւն կը լինէր կարծելը, թէ ՀՀ տնտեսութեան հնարաւոր զարգացումները ոչ ոք չի ուսումնասիրում: ՀՀ-ում կան բազմաթիւ կառույցներ, սկսած միջազգային ֆինանսական կազմակերպութիւնների ներկայացուցչութիւններից, վերջացած տարբեր երկրների տարբեր նախարարութիւնների ստորաբաժանումներով, որոնց հիմնական գործը լուռ ու ոչ հրապարակային ուսումնասիրութիւններ կատարելն ու դրա հիման վրայ որոշակի կանխատեսումներ անելն է:

Այնպէս է ստացուել, որ միանգամից մի քանի նման կառույցներում իրականացուած այդ ոչ հրապարակային ուսումնասիրութիւնների հիման վրայ կանխատեսող սցենարները գրեթէ համընկել են: Ու համընկել են նաեւ սպասող իրադարձութիւնները: Ըստ այդմ, 2008թ. Հոկտեմբեր-Դեկտեմբեր ամիսներին ՀՀ տնտեսութեան մէջ սպասուում են զգալի ցնցումներ: Դրանք, իհարկէ, պայմանաւորուած կը լինեն նաեւ ներքին քաղաքական զարգացումներով, բայց, որքան էլ տարօրինակ է հնչում, ըստ այդ կանխատեսումների, աւելի մեծ ազդեցութիւն կունենան, այսպէս ասած, արտաքին գործօնները:

Յղում անելով ներքին քաղաքական զարգացումների վրայ՝ նկատի են առնուում, բնականաբար, այդ տարուայ զարնանը տեղի ունենալիք նախագահական ընտրութիւնները, որոնց արդիւնքում հաւանական է համարուում սեփականութեան ու ազդեցութեան ոլորտների վերաբաշխման հնարաւորութիւնը:

Բացի այդ, հաշուի է առնուում պահանջարկի բաւարարման արդիւնքում շինարարութեան ծաւալների կտրուկ անկումը: Հաշուի են առնուել նաեւ դրամի շարունակական արժեւորման հետեւանքները տնտեսութեան վրայ, որի արդիւնքում արտահանումը շարունակելու է նուազել, իսկ արդիւնաբերութեան տեսակարար կշիռը տնտեսութեան

մէջ շարունակելու է անկում ապրել: Սակայն մեր գալիք տնտեսական ճգնաժամի հիմնական պատճառները պայմանաւորուած են լինելու, ինչպէս նշեցինք, արտաքին գործօններով: Առաջիկայ 2 տարիներին սպասուում է, որ մասնաւոր տրանսֆերտների աճի դինամիկան դադարելու է:

Սա կարելու է նրանով, որ մեր տնտեսական աճ ցուցադրող ցուցանիշների վրայ մեծ ազդեցութիւն ունի ոչ թէ մասնաւոր տրանսֆերտների ֆիզիկական ծաւալը, այլ այն, թէ ինչ արագութեամբ են դրանք տարեցտարի աճում:

Այլ կերպ ասած, նոյնիսկ եթէ մեր բնակչութիւնը տարեկան մասնաւոր տրանսֆերտների տեսքով ստանայ 10 մլրդ դոլար, բայց այդ թիւը լինի կայուն ու տարեցտարի մի 20-30%-ով չաճի, սպա ազդեցութիւնը տնտեսութեան վրայ կը լինի նոյնը, եթէ ընդհանրապէս չստանար: Տնտեսութեան համար այն դարձել է թմրանիւթ, եւ դրա «դոզան» անընդհատ չաճելու դէպքում տիտուր հետեւանքներ կը լինեն:

Ըստ կանխատեսումների, տրանսֆերտների աճի դինամիկան կանգնելու է հիմնականում ՌԴ-ում տեղի ունեցող իրադարձութիւնների արդիւնքում՝ նաւթի գներն այլևս չեն աճելու, եւ այդ երկրում աշխատող մեր հայրենակիցների եկամուտների աճ նոյնպէս չի սպասուում:

Յաջորդ գործօնը գազի գինն է: Ըստ ՌԴ-ի հետ ձեռք բերած պայմանաւորուածութիւնների՝ ՀՀ սպառողները, այդ թւում նաեւ արդիւնաբերութիւնը, համեմատաբար էժան գազ են ստանալու մինչեւ 2008-ի վերջ: Եւ այդ տարուայ վերջին ամիսներին էլ գազի գնի աճի սպասումները կը բերեն ապրանքների որոշակի թանկացմանը: Եւ հաւ, բոլոր այս գործօնների ազդեցութեան պիկերը համընկնելու են հենց 2008-ի վերջին ամիսներին: Կանխատեսումների համաձայն, գործօններից իւրաքանչիւրը կարող է շղթայական ռեակցիայի էֆէկտ ունենալ եւ ստեղծել բոլորովին անսպասելի նոր գործօններ, որոնք այլևս կանխատեսումների չեն ենթարկուում: Այնպէս որ, թէկուզ որոշակի վերապահումներով, սակայն սպասուող ցնցումները կարող են շատ աւելի ակնյայտ ու խորը լինել՝ իրենց հետ բերելով նաեւ սոցիալական յուզումներ:

Ամէն դէպքում, հնարաւոր է համարուում տարբերակը, որ 2 տարուց գոտ տնտեսական բնոյթի ցնցումները պառնան քաղաքական ցնցումները դատաւում, եւ իրավիճակը կը դուրս գալ վերահսկողութիւնից: Թէ որքանով են հաւանական այս սցենարները, առայժմ դժուար է ասել: Բայց բերուած բոլոր հիմնաւորումները տրամաբանութեան մէջ են: Այլ կերպ ասած, աւելի բարդ իրավիճակներից խուսափելու համար թերեւս արժէ 2008-ի կէսերից սկսել պահուստաւորել լուցկի, աղ, պահածոներ, մոմ ու ալիւր: Այն ճանապարհը, որով ներկայումս գնում է Հայաստանը, ուր ասեմ, կարող է բերել:

ՀԱՅԿ ԳԷՈՐԳԵԱՆ  
«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

## ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՇԵՏԻԱՆՔՆԵՐ

Եթէ եւրոպացին «աւելորդ» փող է ունենում եւ ցանկանում է բարելաւել իր բնակարանային պայմանները, նա վաճառում է իր բնակարանը եւ առնում է աւելի մեծը, ընդարձակը: Եթէ հայաստանցու ձեռքը «աւելորդ» գումար է ընկնում, նա կաշառք է տալիս թաղապետարանում եւ քաղաքապետարանում ու իր եղած բնակարանը մի կէս մետր առաջ է տանում: (Դա, ի դէպ, աւելի թանկ արժէ, քան նոր տուն գնելը): Այնուհետեւ, յաջորդ նման հնարաւորութեան դէպքում նա, նոյն մեխանիզմն օգտագործելով, էլի մի կէս մետր «առաջ է գնում»: Պատճառ թիւ 1. մենք շինարար ազգ ենք: Պատճառ թիւ 2. մենք կապուած ենք մեր բնակավայրերին: Հետեւանք. մեր փողոցներն ու բակերը գնալով նեղանում են: Դրանց հետ միասին՝ մեր տեսադաշտն ու մտահորիզոնը: Եթէ եւրոպացին իր ավտոմեքենան կանգնեցնելու տեղ չի ունենում, նա մի տեղ, մօտակայքում, մեքենան կայանելու տեղ է վարձում: Նոյն վիճակում յայտնուած հայաստանցին դարձեալ կաշառք է տալիս թաղապետարանում եւ քաղաքապետարանում ու իր բակի մէջտեղում ավտոտնակ կառուցում: Պատճառ թիւ մէկը նոյնն է: Երկրորդ պատճառն այն է, որ մենք կապուած ենք մեր ավտոմեքենաներին, եւ դրանք մշտապէս պէտք է աչքներին առաջ լինեն: Հետեւանքները նոյնն են:

Եթէ եւրոպացու բարեկամն ընկնում է ոստիկանութիւն կամ դատա-

խագութիւն, նա մտածում է, թէ որտեղից լաւ փաստաբան գտնի՝ իր բարեկամի իրաւունքները լաւագոյնս պաշտպանելու համար: Եթէ հայաստանցու բարեկամն է յայտնուում քաղմասում, նա ոտուձեռ է ընկնում՝ գտնելու այն ծանօթին, որի միջոցով կը կարողանայ կաշառք տալ ոստիկանութեան (դատախազութեան) քննիչին՝ իր բարեկամին ազատելու համար: Պատճառ. Հայաստանի ոչ մի քաղաքացի չի հաւատում նախաքննութեան եւ դատարանի արդարութեանը: Հետեւանք. Հայաստանում օրէցօր սաստկանում է կոռուպցիայի դէմ պայքարը, եւ «Գրեկօ» խմբին ուղարկուում են գնալով աւելի ու աւելի լաւատեսական գեկոյցներ:

Եթէ եւրոպացուն դուր չեն գալիս իր երկրի օրէնքները, նա հասարակական եւ քաղաքական կազմակերպութիւնների միջոցով փորձում է այդ օրէնքները փոխել: Շատ դէպքերում երկրի պառլամենտի առաջ ցույցեր է անում՝ նման պահանջներով: Եթէ հայաստանցին սխալ է համարում ՀՀ օրէնքները, նա հագարում միջոց է գտնում՝ այդ օրէնքները շրջանցելու: Պատճառ. մենք դարաւոր մշակոյթ ունենք: Հետեւանք. Հայաստանի բոլոր օրէնքները գրուած են միայն թղթի վրայ:

Երբ եւրոպացի որեւէ երկրում ընտրութիւնների ժամանակն է մօտենում, եւրոպացին հարցնում է՝ «ո՞ւմ ընտրենք»: Հայաստանում այդ ժամանակահատուածում քաղաքացիները հարցնում են. «ո՞վ է անցնելու»: Պատճառ. երբ մենք մեր «Որոգայթ փառացն» էինք գրել, եւրոպացիները դեռ ծառերի վրայ էին: Հետեւանք. Բոեանս Ուրուսմովան գոհ կը մնայ մեր ընտրութիւններից:

ԱՐԱՄ ԱՐԲԱՀԱՄԵԱՆ  
«ԱՌԱԻՕՏ»

## ԱՂԱԲԵԿԵԱՆՆ «ՔԱՇԵՑ» ԵՐԿՐԱՊԱՇՆԵՐԻՆ

«Երկրապահ» կամաւորականների միութեան (ԵԿՄ) 7-րդ համագումարի ընթացքում արձանագրուած սենսացիոն բացայայտումը, որը կատարուեց ՀՀ պաշտպանութեան փոխնախարար Արթուր Աղաբեկեանի կողմից, լուրջ իրարանցում է առաջացրել ոչ միայն քաղաքական շրջանակներում, այլև նոյն ԵԿՄ-ում: Յիշեցնենք, որ Ա. Աղաբեկեանը ԵԿՄ-ի անունից յայտարարեց, որ իրենք պաշտպանելու են Սերժ Սարգսեանի թեկնածութիւնը, իսկ ԵԿՄ նախագահ Մանուէլ Գրիգորեանը յայտարարեց, թէ կարիք չկայ շտապելու, քանի որ նախագահական ընտրութիւններին դեռ երկու տարի ժամանակ կայ:

Նախ փաստենք, որ ԵԿՄ նախագահը մինչ այդ մի քանի անգամ իր խօսքում նշեց, որ իրենք չեն զբաղուել ու չեն զբաղուելու քաղաքականութեամբ, իսկ Արթուր Աղաբեկեանը, իր վրայ վերցնելով ԵԿՄ-ի փոխարէն պատասխանելու գործառոյթը, փաստօրէն հակասեց ԵԿՄ նախագահին ու ԵԿՄ կանոնադրութեանը:

Մեր տեղեկութիւններով մի շարք երկրապահներ իրենց դժգոհութիւնն են յայտնել ԵԿՄ ղեկավարութեանը նման մտադրութեան բարձրաձայնման համար, քանի որ երկիրը այս երկրապահների համար ոչ այնքան ցանկալի իրավիճակում գնողներից մէկը հենց Սերժ Սարգսեանն է: Հետեւաբար նրա թեկնածութիւնը պաշտպանելը չի կարող ընդունուել երկրապահների կողմից:

Թ. ԹՈՎՄԱՍԵԱՆ  
«ԻՐԱՒՈՒՆՔ»

**ՄԱՍԻՍ** ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Մրջանի  
  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
ՍԱՐԱԿ ԹՈՒԹՃԵԱՆ  
ՎԱԶԳԵՆ ԽՈՏԱՆԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
  
Ֆեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797- 6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party of  
Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
  
ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104

**ՄԱՍԻՍ**  
ԱՄԵՆԱՎՍԱՀԵԼԻ ԱՂՔԻՒՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

**ԼՈՒՐԵՐ**

**ՍՏԵՂԾԻՈՒՄ ԵՆ «ՔԱՂԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԻ ԴԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՄԻՏԵՆԵՐ»**

«Հայրենիք ու պատիւ» կուսակցութեան նախագահ Գառնիկ Մարգարեանը Դեկտեմբերի 19-ին յայտարարեց, թէ վարդան Մախաբանյանին եւ ժիրայր Սեֆիրեանին կոտորել հնարաւոր չէ, եւ այս անձանց կալանքն էլ «չի ազդելու ոչ մեր, ոչ ժողովրդի վրայ»:

«Հայրենիք ու պատիւ» կուսակցութիւնն ու «Սպայի պատիւ» հասարակական կազմակերպութիւնը Արագածոտնի, Արարատի եւ Շիրակի մարզերում արդէն ստեղծել են «Քաղքանտարկեալների պաշտպանութեան կոմիտէներ» եւ յայտարարում են, որ այլեւս իշխանութիւններն անպատասխան չեն մնայ՝ հարուած կը ստանան: «Մի խաղացէք կրակի հետ», իշխանութիւններին առաջարկում է Գառնիկ Մարգարեանը:

Վարդան Մախաբանի, ժիրայր Սեֆիրեանի ձերբակալութիւնից եւ այս անձանց յայտարարութիւններին ծանօթանալուց յետոյ, Նոր Ժամանակներ կուսակցութեան նախագահ Արամ Կարապետեանն էլ առաջարկում է հանրային լայն լսումներ կազմակերպել եւ փորձել պատասխանել հարցին, թէ ինչպէս է ստացուում, որ հայրենիքի համար պայքարած, երկրի պաշտպանութեանը մասնակցած անձիք մտածում են, թէ «միայն զէնքով կայ հային փրկութիւն եւ այլ ելք չեն տեսնում»:

Արամ Կարապետեանը, դէմ լինելով բռնութիւններին, նկատում է, որ միայն զէնքով փրկութեան մասին մտածում են շատերը, սակայն այս երկուսը բարձրաձայնեցին:

Վարդան Մախաբանի եւ ժիրայր Սեֆիրեանի յայտարարութիւններում կան գլուխ ջարդել, զէնքով քշել, ներքին թշնամիներ

եւ նման յայտարարութիւններ: «Եթէ ձեզ նման ձեւակերպումներով դիմէին, ի՞նչ կ'անէիք», հարցին Արամ Կարապետեանը պատասխանեց՝ հրաժարական կը տայի. «որովհետեւ, եթէ ես ստեղծել եմ այդպիսի իրավիճակ, որ մարտական խաչ ստացած մարդը կարող է նմանատիպ կարծիք արտայայտել, եթէ ես ոչ թափանցիկ վարում եմ բանակցութիւններ, որի ընթացքում կարծիք կայ, որ ծախում եմ ամէն ինչ, եթէ ես շորթում ու կեղեքում եմ հանրապետութիւնը, եթէ ես հասցրել եմ այն իրավիճակին, որ ազատամարտիկների մի մասը դարձել է ամէն ինչի տէր, միւս մասը փողոցում է, եթէ ես կատարել եմ այնպիսի գործողութիւններ, որի ընթացքում հարստացել եմ գրոյից եւ դարձել ամենահարուստ մարդկանցից մէկը, եթէ ատելութեան մթնոլորտը 80 տոկոսով անցնում է, ես միանգամից հրաժարական կը տամ»:

Արամ Կարապետեանը կարծում է, որ վարդան Մախաբանի եւ ժիրայր Սեֆիրեանի յայտարարութիւններում յանցագործութեան տարրեր կան միայն այն պարագայում, եթէ պետութիւնը, իշխանութիւնը գործերն նոյն օրէնքներով՝ եթէ պետութեան մաքուր գործելու պարագայում մարդիկ ասէին գլուխ կը ջարդեմ՝ «բայց եթէ նամուս չունեն, պիտի հասկանան, որ նմանատիպ խօսակցութիւններ 80 տոկոս բնակչութեան բնակարաններում զնում է, եւ ցաւօք սրտի, այդ ատելութիւնը զնալով անելու է»:

Ուստի իշխանութիւնները պէտք է ոչ թէ մարդկանց ձերբակալեն, այլ հասկանան, թէ ինչու են ստեղծել մի վիճակ, երբ մարդիկ մտածում են, թէ փրկութիւնը զէնքով է հնարաւոր:

«Կատարուածը վերստին յօդս է ցնդեցնում իշխանութիւնների ստալոյ ու երեսպաշտական պնդումներն առ այն, թէ Հայաստանում բոլոր քաղաքական գործիչներին հաւասար պայմաններ եւ իրաւունքներ են տրուած: Աւելին, վերելից իջեցնուած պետպատուէրի շրջանակում ՀՀ բոլոր հեռուստաընկերութիւնները՝ պետական, թէ մասնաւոր, փակ են «Ժառանգութեան» հիմնադրի առջեւ:

Իշխանութիւնների նմանօրինակ գործողութիւնները մէկ բացատրութիւն կարող են ունենալ՝ քոչարեանական իշխանակարգը լրջօրէն վախենում է սեփական ժողովրդից եւ այլեւս ի վերջոյ էլ չիտակ նայել ճշմարտութեան աչքերին», - ասուած է «Ժառանգութիւն» կուսակցութեան յայտարարութեան մէջ:

**ԱՐՄԱՏԱԿԱՆ ԸՆԴԴԻՍՈՒԹԻՒՆԸ ՅԱՂԹԵԼՈՒ Է ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Մարգարեանը վստահ է, որ «արդար ընտրութիւնների պարագայում ընդդիմութիւնը յաղթելու է ոչ պակաս 75-80 տոկոսով»:

«Իշխանութիւններով հիացած չէ այս ժողովուրդը», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց Մարգարեանը՝ յաւելելով, որ գալիք խորհրդարանական ընտրութիւնները կեղծելու դէպքում «յեղափոխութիւն է լինելու»:

«Ընտրութիւնների արդարութիւնն այս անգամ աշխարհը չափելու է միմիայն ընդդիմութեան յաղթանակով», - ասաց նա: - «Եթէ չի յաղթելու ընդդիմութիւնը, բաց եմ ասում՝ յեղափոխութիւն է անելու: Փողոց ենք դուրս գալու եւ յեղափոխութիւն ենք անելու»:

«Ու այս անգամ հրապարակից տուն զնալ չի լինելու: Մենք մեր սխալներից հետեւութիւններն անել ենք՝ ի տարբերութիւն իշխանութիւնների», - յայտարարեց նա:

Յաղթելուց յետոյ, Արամ Մարգարեանի խօսքերով, ընդդիմութեան առաջին գործը լինելու է նախագահին անվստահութիւն յայտնելը:

«Ժողովրդավարական ուղի»

**ՈՎԴԻՈՅԻՆ ՎՍԱՅՐՈՒՄ Է ԵՐԵՒԱՆՑԻՆԵՐԻ 57 ՏՈԿՈՍԸ**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
600 երեւանցիների շրջանում «Հայելի» բանավէճի ակումբի անցկացրած հարցումների համաձայն, մարդկանց ընդամենը 7 տոկոսն է վստահում սպազիր մամուլին: Հեռուստաընկերութիւններն անաչառ է համարում հարցուածների 11 տոկոսը: Ռադիոյին վստահում են հարցուածների մեծամասնութիւնը՝ 57 տոկոսը:

«Հայելի» ակումբում այսօր անցկացուած քննարկումը նուիրուած էր մարդկանց՝ ընտրութիւնների ընթացքում անաչառ լրատուութիւն ստանալու ակնկալիքներին ու լրատուամիջոցներին վստահելու հարցին:

Ըստ «Հայկական Ժամանակ»-ի խմբագիր Նիկոլ Փաշինեանի, խնդիրը «անաչառութեան» ընկալումն է. - «Այն լրատուութիւնը, որ հարողում է, դա լրագրողի մասնագիտական ընկալումների թողարկածն է, թէ՛ նախագահականից տեքստը ֆաքս են արել»:

Քննարկման մասնակիցներից ոմանք համամիտ չէին ակումբի անցկացրած հարցման արդիւնքներին հետ:

«Հայք» օրաթերթի եւ «Տա-

կուսակցութեան նախագահ, պատգամաւոր Մանուկ Գասպարեանի կարծիքով, մինչդեռ, «Իշխանութիւնների համար այսպիսի նպատակաւոր պահ դեռ մեր երկրում 15 տարուայ մէջ չի եղել».

«Ազգային միաբանութիւն» կուսակցութեան եւ դրա խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Արտաշէս Գեղամեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում ասաց, թէ ընդդիմութեանը վարկաբեկող նման վերլուծութիւնները կատարուած են «Ռոբերդ Քոչարեան Սերժ Մարգարեան զոյգի աշխատասենեակներում»:

«Հայ ընտրողը կը գիտակցի, թէ ինչ վարկաբեկիչ գործունէութիւն էին ծաւալել իշխանական կերակրատաշտից անուղ վաչքաղաքական գործիչները, որոնք իրենց տարիքի չափ կուսակցութիւններ եւ ճամբարներ են փոխել: Համոզուած եմ, որ ընդդիմադիր դաշտը կ'ունենայ մեծամասնութիւն առաջիկայ ընտրութիւնների արդիւնքում», - ասաց Գեղամեանը:

րեզիդ» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Վասակ Դարբինեանը, օրինակ, ասաց. - «13 տոկոսը ես իսկապէս շատ բարձր ցուցանիշ եմ համարում... Եթէ 13 տոկոսը թերթ կարդայ, սպաքանակը չի լինի այն, ինչ մենք ունենք այսօր»:

Հանրային ռադիոյի «Ռադիոլուր» լրատուական գործակալութեան գլխաւոր խմբագիր Արթուր Սահակեանը յայտարարեց. - «Օպերատիւութեան առումով ես կարող եմ ասել, որ նոյնիսկ «Ռադիոլուր»-ը դաշտում միակն է՝ նոյնիսկ հեռուստատեսային լրատուամիջոցների հետ համեմատ»:

«Որովհետեւ մենք ունենք ժամը մէկ լրատուութիւն», - փաստարկեց նա:

Վասակ Դարբինեանը՝ ընդունելով, որ «Ռադիոլուր»-ը վերջին տարիներին «բաւականին առաջընթաց է գրանցել», շեշտեց. - «Բայց, այնուամենայնից, դա նոյնպէս վերահսկողութեան տակ է»:

«Բացառութիւն, որ հանրամատչելի լրատուութիւն է ներկայացնում, դա «Ազատութիւն» ռադիոկայանն է», - եզրափակեց Դարբինեանը:

**«ՄԻՆՉԵՒ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԿՏԻՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ»**

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»:  
Ռոբերդ Քոչարեան յայտարարել է, որ առաջիկայ ամիսներին Ղարաբաղի հարցով ակտիվ բանակցութիւններ չեն լինելու:

Հայաստանեան երեք հեռուստալայաններին տուած հարցազրոյցում Ռոբերդ Քոչարեանն ասել է. - «Մինչեւ Ազգային ժողովի ընտրութիւնները ակտիվ բանակցային գործընթաց չի լինելու»:

«Ղարաբաղի հարցն օգտագործել նախընտրական պայքարում համարում եմ անբարոյական: Նոյնիսկ ամենից լաւ առաջարկը կը փորձեն վարկաբեկել, եթէ այդ առաջարկը, այդ քննարկումները լինեն նախընտրական շրջանում», - կարծիք է յայտնել նա:

«Հայաստանում կան մարդիկ, որոնք անհամբեր սպասում են, թէ բանակցային գործընթացը հնարաւորութիւն կը տայ չարաշահել դարաբաղեան հարցի կարգաւորման խնդիրը: Նոյնիսկ մարդիկ կան, որոնք պարզ ասում են, որ «Ղարաբաղի հարցում նախագահ Քոչարեանը պարտադրուած է լինելու զնալ գիշումների, եւ մենք դա կ'օգտագործենք քարոզարշաւի ժամանակ»: կը հիասթափեցնեմ այդ մարդկանց», - ասել է Ռոբերդ Քոչարեանը:

ԼՈՒՐԵՐ

ՈՍԱՆՔ ԱՇԽԱՏԱՆՔՈՎ ԵՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ՍՏԵՂԾԵԼ, ՈՍԱՆՔ ԷԼ...

ԵՐԵՎԱՆ, «ԼՐԱ-ԳԻՐ»: FORBES ամսագրի հայալեզու տարբերակի առաջին համարում տպագրվել է Հայաստանի հարուստների տասնեակը: 10 հարուստների մէջ ընդամէնը 4 կուսակցական կաշ, որոնցից 2-ը՝ հանրապետական: Այն էլ՝ ինչ հանրապետական: 6-րդ տեղում հանրապետականի խորհրդի անդամ Երուսնդ Ջախարեանն է, 8-րդը՝ խորհրդի նախագահ ու էլի 5 պաշտօն զբաղեցնող Սերժ Սարգսեանը: Իհարկէ, կարելի է այս երկու հանրապետականներին գումարել նաև կուսակցական պատկանելութեամբ ոչ հանրապետական, սակայն հանրապետական «ախպերութեան» ներկայացուցիչների՝ Մաքսային ծառայութեան պետ, ըստ FORBES-ի՝ երկրորդ հարուստ Արմէն Աւետիսեանին, 9-րդ հարուստ, տրանսպորտի նախարար Անդրանիկ Մանուկեանին, Միխայիլ Բաղդասարովին, եւ կը ստացուի, որ 10 ամենահարուստներից 5-ը հանրապետականի հետ կապ ունեն: Բայց սկզբի համար բաւարարուենք պաշտօնական տարբերակներով եւ արձանագրենք, որ առաջին 10 հարուստների մէջ ընդամէնը 4 կուսակցական կաշ, որոնցից 2-ը՝ հանրապետական:



FORBES ամսագրի հայալեզու տարբերակի առաջին համարը

Հիմա կարելի է յիշել այս հանրապետականների կենսագրութիւնը: Սերժ Սարգսեանը աշխատանքային կենսագրութիւնը սկսել է 1975 թուականին՝ Երեւանի էլեկտրատեխնիկական գործարանում իսառափ է աշխատել: 2000-ից ՀՀ պաշտպանութեան նախարարն է: Առաջօր Սերժ Սարգսեանը միայն պետական պաշտօններ է զբաղեցրել: Մնում է ենթադրել, թէ 30 տարում պետական տարբեր պաշտօններ զբաղեցրած անձը ինչպէս է յաջողել դառնալ երկրի 10 հարուստներից մէկը:

Մօտաւորապէս նոյնն է Երուսնդ Ջախարեանի պարագայում: Նա սկսել է 1962 թուականին՝ Գուտմետշին տրեստից: Երուսնդ Ջախարեանի եւ Սերժ Սարգսեանի տարբերութիւնն այն է, որ առաջինը մի երեք տարի մասնաւոր հատուածում է աշխատել՝ 1994-97 թուականներին Մոսկուայում գլխավորել է արտադրաշինարարական ընկերութիւն: 10 տարի առաջ երեք տարում նա այնքան է վաստակել, որ Հայաստանի 6-րդ հարուստն է:

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ, FORBES-ի առաջին համարի շնորհանդէսից ընդամէնը մէկ-երկու օր անց Գաղիկ Ծառուկեանը, ով առաջին հարուստ է ըստ FORBES-ի, յայտարարեց, որ ինքը վաստակել է աշխատանքով, պետական պաշտօններ չի զբաղեցրել: Ասաց իր կուսակցութեան անդամներին՝ բայց ակնյայտօրէն՝ «կուժ քեզ եմ ասում, կու լալ դու անկայտք» տրամաբանութեամբ: Ինչ պետք է հակադրի սրան Սերժ Սարգսեանը, ով միայն պետական պաշտօններ է զբաղեցրել եւ ոչ թէ հերքում է, որ

10 հարուստներից մէկն է, այլ նեղանալու չափ զարմանում է, որ FORBES-ը իրեն պակաս հարուստ է համարում, քան իստում են մարդիկ:

Եւ որպէսզի Սերժ Սարգսեանը շատ չնեղանայ Գաղիկ Ծառուկեանից, ամսագիրը 100 էջերում Սերժ Սարգսեանի 10 նկար է տեղադրել, գրեթէ հաւասարաչափ սփռուած: Բայց միեւնոյն է, անգամ սա չի մեղմում տպաւորութիւնն ու հարցադրումը՝ որտեղից պետական պաշտօնեային այդ հարստութիւնը:

ՎԱՐԴԱՆ ՕՍԿԱՆԵԱՆԸ ԲԱՆԱԿՑԵԼ Է ԻՐԱՆԻ ՂԵՎԱՎԱՐՆԵՐԻ ՀԵՏ



Մահմադ Ահմեդիմեթադ եւ Վարդան Օսկանեան հանդիպում կ'ունենան Թեհրանի մէջ. կեդրոնը նստած է թարգմանիչ

Հայաստանի արտգործնախարար Վարդան Օսկանեանը շաբաթավերջին Թեհրանում հանդիպումներ է ունեցել Իրանի ղեկավարների հետ՝ քննարկելով երկկողմ յարաբերութիւններին, էներգետիկային, տարածաշրջանային անվտանգութեանը վերաբերող խնդիրների լայն շրջանակ:

Իրանի նախագահ Մահմադ Ահմեդիմեթադը, ըստ իրանական լրատուական գործակալութիւնների, Օսկանեանի հետ հանդիպման ժամանակ ասել է, թէ Թեհրանն ու Երեւանը պէտք է «իրացնեն երկկողմ յարաբերութիւնները զարգացնելու հարուստ ներուժը»:

Իրանցի իր գործընկեր Մանուկէհր Մոթթաքիի հետ հանդիպման ժամանակ երկուստեք գոհունակութեամբ նշուել են Իրան-Հայաստան գազատարի, բարձր լարման էլեկտրահղորդման երրորդ գծի, ինչպէս նաեւ այլընտրանքային ճանապարհի շինարարութեան ծրագրերի կենսագործման փաստը: Շօշափուել են նաեւ էներգետիկայի ոլորտում համագործակցութեան ընդլայնման հնարաւորութիւնները:

ՏՈԼԱՐԻ ԱՐԺԵԶՐԿԱՄԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՈՎ ԲՈՒՅԵՐՈՒՄ ԿԱՇԱՌՔԸ ԴՐԱՍՈՎ ԵՆ ՎԵՐՑՆՈՒՄ



Հնչակեան Կուսակցութեան երեսօտարական միութեան գրասենեակէն մերս տեղի կ'ունենայ մամուլային ասուլիս

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՈՅ»: «Կոռուպցիայի գծով առաջատարն այսօր պետական ազդարային համալսարանն է. այստեղ սոցիոլոգիական հարցմանը մասնակցած ուսանողների 96 տոկոսը հաստատել է, որ բուհում կոռուպցիա կաշ, ընդ որում նրանց 83 տոկոսը փաստել է, որ անձամբ է կաշառք տուել», - Դեկտեմբեր 19-ին յայտարարել է Հնչակեան Կուսակցութեան «Սարգիս Տիրունի» Ուսանողական Միութեան ատենապետ Սահակ Մանուկեանը:

Նրա վկայութեամբ, երկրորդ տեղում Մ.Հերացու անուան պետական բժշկական համալսարանն է, որտեղ հարցուած ուսանողների 86 տոկոսն է հաստատել բուհում կոռուպցիայի առկայութիւնը, իսկ

երրորդ տեղը զբաղեցրել է պետական ճարտարագիտական համալսարանը, որտեղ կոռուպցիան փաստել է ուսանողների 85,5 տոկոսը, բայց միայն 20 տոկոսն է համարձակուել ասել, որ ինքը կաշառք է տուել:

Այս տուեալները հնչակեան կուսակցութեան ուսանողական միութեան երիտասարդները մէջբերում են 2000 ուսանողների հետ իրենց մէկամսեայ սոցիոլոգիական հարցումների արդիւնքներից, որոնք անցկացրել են պետհամալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի մասնագէտներն ու ուսանողները:

Երկրորդ եռեակը բացում է պետական տնտեսագիտական համալսարանը, որը կաշառակերութեան տարածման առումով, ըստ երիտասարդների, չորրորդ տեղում է՝ դա փաստել է հարցուած ուսանողների 81 տոկոսը: 5-րդ եւ 6-րդ տեղերը զբաղեցրել են մանկավարժական համալսարանն ու Բրիւսովի անուան լեզուաբանական համալսարանը:

«Ամենախոշոր գումարները բժշկականում, տնտեսագիտականում եւ Բրիւսովում են. քննութիւն ստանալը՝ 200 տոլարից աւելի», - յայտարարեցին Սահակ Մանուկեանը եւ սոցիոլոգիական խմբի ղեկավար Անահիտ Սարգսեանը:

Նրանց վկայութեամբ, որոշ բուհեր այնքան էլ չեն ողջունել հարցումներ անցկացնելու իրենց նախաձեռնութիւնը, աւելին՝ կաշառակերութեամբ երկրորդ եւ չորրորդ հորիզոնականները զբաղեցրած բժշկական եւ տնտեսագիտական համալսարաններում նոյնիսկ լրջօրէն խոչընդոտել են նրանց:

«Բժշկականում 300 հոգու էինք նախատեսել, բայց ուսիրհուրդն արգելեց, հազիւ 100 ուսանողների կարողացանք հարցնել, այն էլ սոցիոլոգները ստիպուած էին կանգնել դռների մօտ եւ այդպէս հարցնել», - նշեցին նրանք:

Առաւել դրական ցուցանիշներ հարցումն արձանագրել է արուեստի բուհերում: Գեղարուեստի ակադեմայում կոռուպցիայի առկայութիւնը փաստել է հարցուածների 18 տոկոսը, պետական կոնսերուատորիայում՝ 14, Թատրոնի եւ կինոյի պետական ինստիտուտում՝ 13,5 տոկոսը:

«Սարգիս Տիրունի» միութեան անդամները մտադիր են այս արդիւնքներն ուղարկել կրթութեան եւ գիտութեան նախարարութիւն:

ՏԵՍԱԿԵՏ

ԽՈՍՏՈՒՄՆԱԴՐՈՒԺԸ

Թուրքիոյ Հանրապետութիւնը՝ ժառանգորդ Օսմանեան Կայսրութեան, ժառանգած է նաեւ անոնց վատ սովորութիւնները՝ տրուած խօսքերը չյարգել:

Օսմանեան Կայսրութիւնը միշտ եղած է խոստումնադրութ: Շօքել (A. Schopell), 1904-ին, իր գիրքին՝ «The reforms and the protection of Christians in Turkey during 1673 until 1904» մէջ նշած է 645 սուլթանական հրամանագրեր, ծանուցումներ, դաշինքներ, համաձայնութիւններ, շրջաբերականներ, որոնք երբեք լոյս աշխարհ չեն տեսած:

Այդ թուականէն դար մը անցած է: Եւրոպա եղած է աւելի քաղաքակիրթ, աւելի ժողովրդավար, իսկ Թուրքը, որ կը ձգտի Եւրոմիութեան մաս կազմել, տակաւին չէ կրցած թօթափել իր խաւարամտութիւնը: Ինչպէս կրնայ, երբ կարեւորութիւնը կը տրուի մզկիթներու՝ փոխանակ գիտութեան: Երկրին մէջ կան միայն 7 հազար առողջապահական հաստատութիւններ, երբ այդ թիւը Ֆրանսայի մէջ 60 հազար է եւ Գերմանիոյ մէջ ալ՝ 70 հազար: Բայց կրօնամոլները շինած են 77 հազար մզկիթներ, մինչդեռ Ֆրանսայի մէջ կան 9 հազար եկեղեցիներ եւ Գերմանիոյ մէջ ալ՝ 8 հազար:

Թուրքիա, Լոզանի Դաշնագրով, իր սահմաններուն մէջ մնացած փոքրամասնութիւններուն՝ հայերուն, յոյներուն, հրեաներուն, որոշ իրաւունքներ ճանչնալ խոստացած էր: Այդ խոստումներուն որոշ մէկ մասը երբեք չէ իրականացած:

Թուրքիա, ԵՄ-ի հետ անդամակցութեան բանակցութիւններուն սկսելու համար ԵՄ-ի անդամ, սակայն Թուրքիոյ կողմէ «ճանաչման չարժանացած» Կիպրոսի Հանրապետութեան փոխադրական միջոցներուն առջեւ իր նաւահանգիստները եւ օդակայանները բանալ խոստացած էր: Այդ խոստումէն ի վեր տարի մը անցաւ, սակայն Թուրքիա իր խոստումը չէ յարգած եւ յարգելու ալ նպատակ չունի:

ԵՄ-ի այն պետութիւնները, որոնք Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ տաժանելի օրեր ապրած էին, Թուրքիոյ ԵՄ-ի անդամակցութեան համամիտ չեն: Ֆրանսա, Գերմանիա, Հոլանտա, որոնք մեծ թիւով թուրք եւ մահմետական բնակչութիւն ունին եւ անոնց ցուցաբերած վարքէն գոհ

չեն, Թուրքիոյ անդամակցութիւնը դժուարացնելու համար զանազան հաւելեալ պայմաններ կը ներկայացնեն:

ԵՄ-Թուրքիա բանակցութիւնները նախատեսուած տաս տարիէն ալ աւելի պէտք է երկարաձգուին, որպէսզի Թուրքիոյ մէջ վերջերս սկսած ժողովրդավարական շարժումը կարենայ արմատանալ: Որպէսզի յեղաթիւրուած, »թապու« նկատուած բոլոր հարցերը՝ յատկապէս Հայոց Յեղասպանութեան հարցը, իր ցանկալի հունին մէջ մտնէ եւ Թուրքիոյ Հանրապետութիւնը գաջն ճանչնայ:

Տարիներէ ի վեր ուրացման քաղաքականութիւն վարող պետութիւն մը, առանց թուրք ժողովուրդին ճշմարտութեան իրազեկ դառնալուն, մի քանի տարուան մէջ իր դիրքը չկրնար փոխել: Այսօրուայ պայմաններով նման դիրքափոփոխութիւն որեւէ քաղաքական կուսակցութեան համար համազօր է անձնասպանութեան:

Թուրքիոյ եւ Հայաստանի Հանրապետութիւններուն մէջ բարդորացիական յարաբերութիւններու եւ Հարաւային Կովկասի մէջ անդորութեան վերահաստատման տեսակէտով Հայոց Յեղասպանութեան ճանաչումը անհրաժեշտութիւն մըն է:

Սփիւռքահայ կազմակերպութիւններ, մինչեւ 2015, պէտք է աջակցին բոլոր այն թուրք պատմաբաններուն եւ յատկապէս լրագրողներուն, որոնք, ի սէր երկրէն ներս ժողովրդավար կարգերու հաստատման, պետութեան յեղաթիւրած պատմութիւնը կը ջանան սրբագրել եւ կը ճանչնան Հայոց Յեղասպանութիւնը:

Նեցուկ պէտք է կանքնուի թերթերու մէջ ճշմարտութիւնը ներկայացնող բոլոր այն գրիչներուն, որոնք ամէն օր միլիոններ լուսաբանելու կարելիութիւնը ունին:

Վերնախաւը իր դիրքը միայն թուրքին՝ թուրքը լուսաւորումովը կրնայ փոխել:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
«ԼՈՒՍԱԲԱ»  
ԹՈՐՈՆԹՕ

ՐԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ ԱՊՕՐԻՆԻ ԶԱԻԹՈՒՄ ԵՆ ԱՐԱԳԱՃ ԲԱՐԴԻՆԵՐԻ ՏՆԿԱԴԱՇՏԵՐԸ

Ամերիկահայ ձարտարագէտների եւ Գիտնականների Ընկերակցութիւնը, ՀՀ Բուսաբանութեան Ինստիտուտը, ու Հայաստանը սկսեալ 1994ից միասնաբար աշխատում են արագած բարդիների նախագծի վրայ: Այս գիտափորձարարական նախագծի կատարման ընթացքում, Հայաստան են ներմուծուել Ամերիկեան ու Գանատական արագած բարդիների 53 կոններ: Այս կոնները տնկուել են հանրապետութեան տարբեր շրջաններում: Հիմնուել են նաեւ փորձարարական երկու տնկադաշտեր Արմաւիրում՝ 52 հեկտար տարածքի վրայ: Նախագծի հիմնական նպատակն է ուսումնասիրել կարելիութիւնները, այս արագած բարդիներից կարճ ժամանակահատուածում մեծ քանակութեամբ բնափայտ ստանալ եւ եւ փրկելու բնական անտառները անխնայ հատումներից: Այս կոններից շատերը ցուցաբերել են գերազանց արդիւնքներ: Մինչեւ օրս բաւականին մեծ ծախսեր են կատարուել եւ աշխատանքներ են տարուել այս նախագիծը իրականացնելու համար:

Այս տնկադաշտերը միակն են ամբողջ Կովկասում եւ նրանց գիտական արժէքը հսկայական է: Այս գիտափորձարարական աշխատանքը դեռեւս չի հասել իր աւարտին: Արագած բարդիները կարող են բաւարարել հանրապետութեան փափուկ բնափայտի կարիքները կարճ ժամանակաշրջանում եւ նաեւ ստեղծեն մեծ քանակով վառելիքափայտ: Բայց այս արդիւնքներին հասնելու համար անհրաժեշտ է որ աւարտուեն գիտափորձարարական աշխատանքները:

Արմաւիրի անտառատնտեսութեան 2004ի լուծարումից յետոյ, կառավարութեան որոշմամբ այդ հողերը տրամադրուել էին Բուսաբանութեան Ինստիտուտին՝ գիտափորձարարական աշխատանքները շարունակելու նպատակով: Բայց հակառակ կառավարութեան յստակ որոշումին, Արմաւիրի մարզպետարանը վաճառել է Արմաւիրի տնկադաշտերից շուրջ 12 հեկտարը:

Այս հողամասերի մեծամասնութեան գնողն է մէկ նախարար իսկ մի ուրիշ մասի գնողն է Արմաւիրի քաղաքապետը: Այս հողամասի վրայ են գտնուում ամենալաւ ինամք տարուած արագած բարդիները:

Հսկայական ջանքեր ու գումարներ են տրամադրուել Ամերիկահայ ձարտարագէտների եւ Գիտնականների Ընկերակցութեան կողմից այս տնկադաշտերի ստեղծման ու ինամքի համար: Մեզ համար հասկանալի չէ, թէ ինչպէս կարելի է այս բոլոր տարուած աշխատանքները անտեսել ու նախատեսուած արդիւնքին դեռեւս չհասած, այս տնկադաշտերը վաճառել որի հետեւանք է լինելու ծառերի ոչնչացումը: Յաւելեալ մտահոգիչ է այն պարագան, որ այս հողերի գաւթողներն են պետական պաշտօնեաները:

Այս հողերի ապօրինի սեփականաշնորհումը մեզ համար անընդունելի է: Այստեղ հարց է առաջանում, թէ ինչպէս կարելի է Հանրապետութեան մէկ մարզի աշխատակազմը գործարքներ կատարի, որոնք հակասում են կառավարութեան յստակ որոշումին: Այս բոլորը այն է ապացուցում որ Ամերիկահայ ձարտարագէտների եւ Գիտնականների Ընկերակցութեան կողմից տարուած աշխատանքները ու ներդրումները կարելի է անտեսուում են մարզի աշխատակազմի կողմից ու գաւթուում են ծառապատուած հողերի լաւագոյն հատուածները: Այս երեւոյթը հարցականի տակ է դնում այն առաջադրանքը, որ ներկայացուում է Հայաստանի արտաքին գործերի նախարարի կողմից Հայաստան-Սփիւռք Խորհրդաժողովում: Ինչպէս կարելի է սպասել, որ սփիւռքահայութիւնը ֆինանսաւորէ 50 սահմանամերձ գիւղերի վերականգնումը, երբ տեղական կազմերը կարող են շատ հեշտութեամբ գաւթել ցանկացած վերամշակուած հողամաս ու նաեւ վերանորոգուած շինութիւն, ապա վաճառեն դրանք:

Մեր պահանջն է ՀՀ կառավարութիւնից որ այս 12 հեկտար հողամասի ապօրինի վաճառումը չեղեալ համարուի ու այդ հողամասերի վկայականը անմիջապէս տրամադրուի Բուսաբանութեան Ինստիտուտին ըստ կառավարութեան որոշումին:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԳԻ ԸԱՍԱՐ) ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA**  
ՍԱՆՐԱՍԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝  
ԸՆՈԱՉԱՅՆԵԼ  
(626) 797-7680  
(626) 398-0506

HOMENMEN PRESENTS  
**BIG BEAR 2007**  
January 13-15, 2007  
HOMENMEN is hosting it's annual Big Bear Winter Trip. Bring your family and friends along and join the fun from Saturday January 13 to Monday January 15 (Martin Luther King Holiday).  
\$125/Adult  
\$85/Child  
Includes:  
Room/Board  
Food  
Games  
Live Music  
FOR RESERVATIONS  
CONTACT: Razmig 818-590-2824

Ա. ԾՆՈՒՆԴ

ԾՆՈՒՆԴԻ ՊԱՏՊԱՍ ԱՐԿԻԱՊԱՏԻՒ ՄԱՆՈՒԷԼ ԵՊՍ. ՊԱԹԱԳԵԱՆԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԸԻՄԻՍԱԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԿԱԹՈՂԻԷ ԸԱՅՈՑ ԳՏՆԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԸՏՏԲԸ ՆՇԱՆՆԵՐՈՒ ՄԵԶ

Քրիստոսի ծնունդը մնայուն հրա-  
ւէր մըն է մարդուն՝ զինքը փնտռելու  
եւ գտնելու: Առաջին օրէն ուր Քրիս-  
տոս աշխարհի վրայ երեւցաւ, ինք-  
զինքը նշաններով յայտնեց, որպէսզի  
ասոնց ընդմէջէն մարդիկ հասնին  
անոր ծանօթութեան:



Հովիւներուն յայտնուեցաւ երկ-  
նային էակներու միջոցաւ, որոնք նշան  
մը տուին ուղղելու համար զանոնք  
դէպի նորածին փրկչին ծնունդի վայ-  
րը. քարայր մը եւ հոն՝ մտուր մը, եւ  
խանձարուրով պատուած մանուկ մը  
մտուրին մէջ: Հովիւները, պարզ մար-  
դիկ, գոհացան այդ պարզ նշանով եւ  
ճանչցան մարդացած Աստուածը:

Մոգերը, դիրքի ու զարգացումի  
տէր մարդիկ, բացառիկ աստղի մը  
տեսութեամբ յայտնութիւն ունեցան  
տիեզերքի արքային: Հակառակ աշ-  
խարհագրական ու հոգեմտային հսկայ հեռավորութեան որ կը բաժնէր  
զիրենք աւետուած Հրեաներու արքայէն, անոնց երկար ու տաժանելի  
ուղեւորութիւնը պակասեցաւ արժանի վարձատրութեամբ. տեսան,  
ճանչցան ու պաշտեցին Մեսիան:

Դարերու ընթացքին նոյն ուղեւորութիւնն է որ կ'առաջնորդէ  
մարդը դէպի Աստուած: Ուղեւորութիւն որ երբեմն կիսաւարտ կը մնայ,  
երբ մարդը, յոգնած ճամբու երկարութենէն, կը յուսալքուի ու կը  
հրաժարի որոնումէն:

Աստուած սակայն, երկու հազար տարի առաջ, մարդուն ընդառաջ  
եկաւ, կիսեց անոր ուղեւորութիւնը, թեթեւեցնելու ու դիւրացնելու համար  
անոր փնտռումը: Եւ գիտենք թէ ինչպէս:

«Բանը մարմին եղաւ» կ'ըսէ Յովհաննէս իր Աւետարանին սկիզբը:

Բանը՝ այսինքն Աստուծոյ Խօսքը, սուրբ գրային լեզուով՝ անոր  
Որդին, նոյնինքն Աստուած: Անիկա երկինքի փառքով չգոհացաւ, ինչպէս  
կ'ըսէ Պօղոս, այլ ուզեց բաժնել անկեալ մարդուն վիճակը, այլ խօսքով՝  
ցածնալ, նսեմանալ, հաւասարելու համար անոր հետ, որովհետեւ այլ կերպ  
չկար զայն վերականգնելու՝ կորսուած նախկին վիճակին մէջ գետեղելու  
համար:

Ուստի մարդացաւ, այսինքն մարմին առաւ մեզմէ ամէն մէկուն  
նման: Մարմին առնել կը նշանակէ դառնալ տկար ու դիւրաբեկ, ենթակայ  
մահուան ու փճացումի. մէկ խօսքով՝ անէանալ:

Քրիստոս անէացաւ որպէսզի մենք կեանք առնենք, Աստուծոյ  
որդեգրուելով: Յովհաննէս կ'ըսէ. «Անոնք որ ընդունեցին զինքը եւ  
հաւատացին իր անունին՝ իշխանութիւն տուաւ անոնց՝ Աստուծոյ  
որդիներ ըլլալու»:

Այս է Աստուծոյ փառքն ու երջանկութիւնը. տեսնել մեր իւրաքան-  
չիւրին մէջ վերակազմուած դիմագիծը իր մարդացած Որդուն: Անոր  
առջեւ մենք ոչ թիւ ենք ոչ շղթայի մը օղակը. այլ մէկ մէկ կենդանի  
պատկերները իր աստուածային դէմքին, մէկական նմոյշները իր  
ստեղծագործական կարողութեան, իւրաքանչիւրս յատուկ անունով մը  
ճանչցուած եւ յատուկ տեղ մը գրաւած՝ իր սրտին ու սիրոյն մէջ:

Եթէ չըլլար այդպէս՝ Աստուած իր Որդին չէր զրկեր աշխարհ որ  
մեզի նման խեղճ ու մահկանացու դառնայ: Բեթղէմի քարայրը  
խորհրդանշան է անըմբռնելի, անչափ սիրոյ մը որ նման չունի  
մարդկային պատմութեան մէջ, որովհետեւ հանդիպումն է երկու  
ծայրայեղութիւններու. ծայրայեղ խեղճութեան եւ ծայրայեղ կատարե-  
լութեան: Աստուած երկինքէն իջաւ որպէսզի մարդը, իր խեղճութեան  
մատնուելով, չյուսալքուի եւ չհեռանայ իրմէ:

Աստուած կը դիմաւորէ մեզ, առաջին քայլը կ'ընէ մեզի հանդիպելու  
համար: Կը սպասէ որ մենք ալ ճամբայ ելլենք, մինչեւ որ հանդիպինք  
իրեն եւ ճանչնանք զինքը, հոգ չէ թէ քարայրի մը մէջ, մանկան մը կերպը  
առած եւ մեզի սպասող:

«ՓՈՔՐԻԿՆԵՐՈՒ Ա. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ» ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԵԶ

Ուրբաթ, Դեկտեմբեր 15ին, 2006 ցծնութիւն մը կար Առաջնորդարանի ամբողջ տարածքին վրայ, կարծես Գարուն էր կրկին, փոքրիկներուն ուրախութիւնը տեսնելիք բան մըն էր: 500ի հասնող հայ դպրոցներու աշակերտ-աշակերտուհիներ, ուրախութեան աղաղակներով իջան իրենց օթօպիւսներէն եւ ուղղուեցան դէպի Առաջնորդարանի Գալայճեան Սրահը իրենց ուսուցիչներով: Սրահի մուտքին Առաջնորդ Սրբազան Հայրը հոգեւորականներով միատեղ, հիւրընկալեցին աշակերտներուն բարի գալատեան ջերմ խօսքերով:

Այս տարի Թէքէեան Մշակութային Միութեան Արշակ Տիգրանեան Վարժարանի հերթն էր կազմակերպելու յայտագիրը:

Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան բարի գալուստ մաղթեց աշակերտներուն եւ ուսուցիչներուն՝ ջերմ եւ խանդավառ խօսքերով: Միջոցառումը ուրախ էր, եւ սպասման վիճակին մէջ, տեսնելու եւ ունկնդրելու Արշակ Տիգրանեան Վարժարանի կողմէ պատրաստուած Նոր Տարուան եւ Սուրբ Ծննդեան յայտագիրը:

Սրահը լեցուն էր աշակերտներով, որոնք եկած էին Թ.Մ.Մ. Արշակ Տիգրանեան Վարժարանէն, Ալֆրէտ եւ Մարկրիթ Յովսէփեան Վարժարանէն, Հ.Բ.Ը. Միութեան Մանուկեան-Տէմիքեան Վարժարանէն եւ «Փոքրիկ Հրեշտակներ» ու դպրոցէն:

Բեմը լեցուեցաւ հոգեգուարի դէմքերով, որոնք փափկաձայն սկսան երգել «Այսօր Տօն է Սուրբ Ծննդեան» մեղեդին, մինչ նախաբեմին աշակերտները հովուական տարազներով կը մօտենային երկրպագելու Նորածին Արքային:

Քրիստոսի ծնունդն էր: Փոքրիկները հրեշտակային տեսքով թրթռուն կ'աւետէին աշխարհին խաղաղութեան մաղթանքը «Փառք ի Բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն ի մարդիկ հաճու-

թիւն»: Երգչախումբը ընկերակցութեամբ դաշնակի Քրիստոսի երգերով կը լեցնէին մեր հոգիները եւ պարախումբը իրենց ճկուն եւ նուրբ մարմնակազմով սրտապարար եւ կենդանի միջոցառում կը ստեղծէին իրենց կենսաւարա շարժումներով, հայկական պարերով՝ հայկական տարազներով:

Աշակերտներուն բեկրանքը բոլորիս սիրտը կը լեցնէր սրտաբուխ ցնծութեամբ: Ասմունք, երգ, պար, ներկայացում, բոլորն ալ վարպետօրէն յաջողեցին իրարու եւ մենք առանց ձանձրոյթի հիացումով հետեւեցանք Արշակ Տիգրանեան Վարժարանի աշակերտներուն կողմէ հրամցուած յայտագիրը:

Ուրախութիւնը բազմապատկուեցաւ երբ Կաղանդ Պապան տարուբերելով ներս կը մտնէր սրահէն, մինչ Տէր Արշակ եւ Տէր Վարդան դաշնակի ընկերակցութեամբ կ'աւետէին Կաղանդ Պապային գալուստը:

Սրբազան Հայրը հոն էր, մօտը Կաղանդ Պապային եւ Աստուծոյ օրհնանքը կը բաշխէր մեր աշակերտներուն վրայ՝ քաջալերելով անոնց իրենց ուսման մէջ, յորդորելով ըլլալ բարի եւ առաքինի հայորդիներ, հաւատարիմ իրենց մաքուր հաւատքին մէջ հանդէպ Աստուծոյ եւ իրենց Մայր Եկեղեցիին:

Շնորհաւորելի ձեռնարկ մըն էր եւ պատուաբեր: Նախ գաղափարին իրագործմանը եւ ապա մեր դպրոցներուն, որոնք այսօր յաջող կերպով կատարեցին Քրիստոսի այս հիանալի միջոցառումը:

Սրբազան Հայրը իր փակման խօսքին մէջ շնորհաւորեց եւ շնորհակալութիւն յայտնեց դպրոցի Տնօրէնին եւ հանդէսը պատրաստող ուսուցիչներուն՝ յանձնելով իրենց գեղեցիկ նուէրներ: Հանդէսի աւարտին, Սրբազան Հայրը հրաւիրեց բոլորը միասնաբար երգելու «Հայր Մեր»ը: Ապա նրբամոզեցին մէջ Սրբազանը բոլորին բաշխեց նուէրներ՝ մաղթելով բոլորին բարի տարի:

**ԲԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ԾՕ**  
Ամէն Կիրակի երեկոյեան  
ժամը 11:00-ից 1:00  
Կլէմտէյլի 26-րդ կայանից

**AAA A.B.A. INSURANCE SERVICES**  
Commercial Auto Fire Life Health  
Blue Cross of California Blue Shield of California  
Season's Greetings  
Վարձարանի Օպտիմալ Վերաբերում  
ՊԵՏՐՈՍ ԵՒ ՍԻԱՄԱՆԹՕ  
**ՄԱՐՈՆԵԱՆ**  
818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205  
ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"



# ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

«ԺԱՄԱՆԱԿԱՅՈՅՁ ԽՈՂԵՐ» ԳԻՐՔԻ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՌԹԻ

## ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ ԳՐՈՂ ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ

Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ Թէքէեան Մշակութային Միութեան Լոս Անճելըսի Մասնաճիւղի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Մշակութային Յանձնախումբի եւ Չորք-Մարգպանի Հայրենակցական Միութեան, Չորքաբերի, Դեկտեմբեր 13ին, 2006 երեկոյեան ժամը 7:45ին Արեւմտեան Թեմի Առաջնորդարանի Արշակ եւ Էլիանոր Տիգրանեան Համալիրի Գալայճեան Սրահին մէջ գրասէր եւ մշակութասէր հոծ բազմութեան ներկայութեան, տեղի ունեցաւ յարգանքի երեկոյ մը՝ նուիրուած Լիբանանէն ժամանած երկարամեայ գրող Արամ Սեփեթճեանի, իր հեղինակած «Ժամանակայոյց Խոհեր» գիրքի հրատարակութեան բարեբաստիկ առիթով:

Օրուան հանդիսավարն էր Հոգշ. Տ. Պարեոս Մ. Վրդ. Երէցեան: Հանդիսութեան կը նախագահէր Առաջնորդ Սրբազան Հայրը: Ներկայ էին նաեւ Լոս Անճելըսի շրջանի Թեմի հոգեւորականները եւ հանրաժանութի գրողներ:

Հայր Սուրբ բարի գալուստ մաղթեց բոլորին եւ իր բացման խօսքին մէջ արտայայտուեցաւ հեղինակի անձին եւ գործին մասին:

Ապա հրաւիրեց Տիար Նուպար Յակոբեանը, որ իր ջերմագին ողջոյնի խօսքը ուղղեց եւ որոշ չափով անդրադարձաւ Պրն. Սեփեթճեանի կեանքին:

Տաղանդաւոր երաժիշտ Վաչէ Մանկրեան դաշնամուրի վրայ նուագեց հայկական երաժշտական կտոր մը:

Տոքթ. Կիրակոս Մինասեան, հակիրճ բաց կատարեալ ձեւով ներկայացուց հեղինակին ծառայութիւնները Բարեգործականէն ներս:

Տիար Վաչէ Սեփեթճեան հանգամանօրէն եւ մանրամասնութեամբ գրախօսականը կատարեց Պրն. Արամ Սեփեթճեանի հեղինակած «Ժամանակայոյց Խոհեր» գիրքին, երբեմն որոշ հատուածներ կարդալով գիրքէն եւ մեկնաբանութիւններ տալով: Իր խօսքը ամբողջացնելէ առաջ, Արշակ Տիգրանեան վարժարանէն նոր շրջանաւարտ եղած Տիգրան Ալթունեանը հրաւիրեց, որ հեղինակին կողմէ 1991 թուին Հայոց Յեղասպանութեան մասին գրուած շահեկան յօդուածը կարդաց: Ապա Պրն. Սեփեթճեան գնահատական խօսքով եւ բարեմաղթութիւններով աւարտեց իր գրախօսականը:

Հանդիսապետ Հայր Սուրբը, մեծ հաճոյքով հրաւիրեց մեծարեալ յոբելեարը, որպէսզի իր սրտի խօսքը ընէր:

Պրն. Սեփեթճեան յայտնեց, թէ ինք խորապէս յուզուած է տեսնելով հոգեւորականաց դասը, աւագ գրչեղբայրներ եւ մշակութասէր հասարակութիւնը: Ան շեշտեց հայ գրականութեան, մշակոյթի, Հայրենիքի եւ Հայց. Եկեղեցու նկատմամբ մեր մեծ սիրոյն անհրաժեշտութիւնը: Յիշեց Սաղմոսէն համար մը, որ Աստուծոյ կը հայցէր իր լոյսն ու ճշմարտութիւնը՝ կոչ ուղղելով, որ մեր կեանքի ընթացքին կարիքը ունինք լոյսի եւ ճշմարտութեան, որպէսզի Աստուծոյ օրհնութեամբ եւ շնորհներով ապահովենք գոյութիւնը մեր ազգին եւ հայրենիքին: Յաւաքական պատճառներով Միջին Արեւելքի հայութիւնը կը նուազի եւ հաստատուի Արեւմտեան Թեմի Առաջնորդ անոր Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի հովանաւորութեամբ եւ մասնակցութեամբ իր սրտին շատ մօտիկ եւ գործակից Թէքէեան Մշակութային Միութեան, Հ.Բ.Ը. Միութեան եւ Չորք-Մարգպանի Հայրենակցական Միութեան: Իր սէրն ու յարգանքը

Այո՛, ան ունեցած է իր հետեւանքները, ձգեր է իր ազդեցութիւնը եւ չէ եղած միայն հպանցիկ: Ազդեցութիւնը եղած է բազմազան, ինչպէս, կենցաղը, հասարակական

կեանքը, ընկերա-տնտեսական կեանքը, մշակոյթը: Ուրեմն լեզուն չէր կրնար չ'ազդուիլ ու բացառութիւն կազմել: Նամանակաւորաբար խօսակցական լեզուն, ինչպիսին էր Հաճնոյ բարբառը: Լեզուն շատ նրբագգայ է եւ շատ արագ կ'ենթարկուի ազդեցութիւններու անոնք ըլլան լեզուական կամ արտալեզուական:

Պատմական ամէն մէկ իրադարձութիւն, ամէն մէկ երեւոյթ, իր արտացոլումը կը գտնէ լեզուի մէջ: Լեզուն քննելով, մենք կրնանք պարզաբանել այդ լեզուով խօսող ժողովուրդի անցեալը, ինչ որ որոշ չափով ներկան ալ: Լեզուի քննութիւնը կը պարզէ այդ ժողովուրդին անցած ճանապարհը, ժողովուրդին ճակատագիրը, անոր յաջողութիւնները ու դժբախտութիւնները: Եթէ կ'ուզենք պատկերացնել որեւէ ազգի մը կենցաղը, պատմութիւնը, մշակոյթը, հասարակական կեանքը, բաւական է տեղեկանալ այդ ազգի լեզուին անցած ճանապարհը, իմանալ անոր կրած փոփոխութիւնները, այս ամէնը կը վերականգնեն այդ ազգի կեանքին ու ճակատագրին գրեթէ ամբողջական պատկերը: Լեզուի մէջ է որ թաքնուած է իւրաքանչիւր ազգի գոյութեան հիմնական գաղտնիքը: Այսինքն՝ Հաճնոյ բարբառի միայն փոքր աստիճանաւորումը քննելով, մենք կը տեղեկանանք նաեւ Հաճնոյցի կենցաղին ու մտածելակերպին, մեզ համար յայտնի կը դառնայ Հաճնոյ քաղաքի ճակատագիրը, անոր ըմբոստ ոգին, որ ոչ մէկ վայրկեան իսկ, լքեց զայն:

Աշխարհի մէջ շատ քիչ շրջաններ ունին այդքան հարուստ անցեալ, որքան ունի Կիլիկիան:

Այդ հարուստ ու հետաքրքիր անցեալը կապուած է Կիլիկիոյ դիրքի ու գրաւչութեան հետ: Այո՛, Կիլիկեան ունի բազմաթիւ հրապոյրեր, աննման ծով, թովիչ գեղեցկութեամբ ծովափ, Տաւրոսեան, լեռնային բնապատկերներով եւ յատկապէս անցեալի տպաւորիչ հետքերով:

Բայց այդ գրաւչութիւնն ու հրապոյրը շատ անգամ «բացասական» անդրադարձ ունեցաւ «գեղեցկուհի» Կիլիկիայի վրայ:

Կիլիկիան դարձաւ հայերու երկրորդ հայրենիքը: Տարբեր ժամանակներէ սկսեալ Կիլիկիա գաղթած են Հայաստանի տարբեր շրջաններէն բազմաթիւ հայեր: Անոնք կը գաղթէին տարբեր-տարբեր պատճառներով: Թէեւ նպատակը նոյնն էր, ապահովել բարեկեցիկ ու ապահով կեանք, իրենց եւ իրենց ընտանիքներուն համար: Կիլիկիան այդ տեսակէտով նպատակաւոր էր:

Հայ ժողովուրդը հիմնեց իր օճախը Կիլիկիոյ մէջ ու սկսաւ աշխատիլ ու այնքան լաւ աշխատանք տարաւ որ Կիլիկիան դարձաւ դրախտաւայր, երկրորդ Հայաստան:

Ան նման էր Հայաստանին, իր լեռներով, տաք արեւով ու սառնորակ ջուրերով:

Կիլիկիան ունէր նաեւ ծով, որ հայ ազգի մշտական երազն էր: Կիլիկիոյ մէջ շատ արագ զարգացան երկրագործութիւնը, արհեստները, զարգացաւ նաեւ ծովային առեւտուրը:

Այս եւ մի քանի աշխարհաքաղաքական պատճառներով, Կիլիկի-

ան շիման արտակարգ կեդրոն դարձաւ Եւրոպական եւ Ասիական քաղաքակրթութիւններու միջեւ: Եւրասիայի գրեթէ բոլոր քոչուոր ժողովուրդները, սկսած Արեւմուտքէն, նորմանացիները, Արեւելքէն, մոնկոլները, անցած են Կիլիկիոյ, կղզիի դիմաց գտնուող Միջերկրական ծովու հիւսիս-Արեւելքի մէջ ծուարած այդ փոքրիկ եռանկիւնի վրայով:

Կիլիկիան իր հրապոյրներով դէպ իրեն գրաւած էր շատերուն: Բոլորը կը ձգտէին գեղեցկուհի Կիլիկիայի հրապոյրներէն: Կ'ուզէին, կը ցանկային տիրել այդ հարուստ երկրամասին: Կ'ուզէին նուաճել Կիլիկիան:

Պէտք է յիշեցնել նաեւ որ այդ ամէնը ոչինչ էր եթէ այնտեղ հայը չի գտնուէր:

Ճիշդ է որ շատ գրաւչութիւններ Կիլիկիա ունէր. նպատակաւոր պայմաններ, հարուստ էր, կը մշակէր Կիլիկիայի բերրի հողը. կը զարգացնէր արհեստները ու առեւտուրը:

Հայ ազգի անխոնջ ու անձուրաց աշխատանքի եւ ինչու չէ նաեւ շնորհիւ իր տաղանդին, Կիլիկիան դարձաւ այդպէս հարուստ եւ զայլ-թակոյչ բոլորին համար: Կիլիկիան դրախտաւայր էր. հայ ժողովուրդը կ'ապրէր հոն ու կը սատարէր:

Կիլիկիան անմատչելի գեղեցկուհի էր շնորհիւ հայու ստեղծագործ մտքի եւ արարչական ձեռքի: Այս հրապոյրներն էին շատ անգամ Կիլիկիայի դժբախտութեան պատճառներէն ոմանք: Ո՞վ կրնար անտարբեր մնալ անոր թովչանքին: Այս գրաւիչ Կիլիկիան բացի իր տուեալ հրապոյրներէն, ունէր նաեւ ըմբոստ ոգի: Բազմաթիւ անգամներ մարտնչած է որպէսզի անադարտ պահէ իր հրապոյրներն ու գրաւչութիւնը: Անհնարին է Կիլիկիայի հայուն տեսնել թշնամիէն նուաճուած ու հնազանդ: Զէջթունցին, Հաճնոյցին միշտ պայքարած են թշնամիի բռնութեան դէմ. ամէն ջանք թափած են ունենալու եւ ձեռք բերելու ազատ ու անկախ գոյութեան իրաւունք: Երբեք չեն համակերպած նուաճուած մնալու զաղափարին հետ: Քանի որ Կիլիկիան միայն հրապուրիչ ու դիւթիչ չէր, այլ նաեւ ունէր ըմբոստ ոգի: Բազմաթիւ անգամներ մարտնչած է որպէսզի անադարտ պահէ իր հրապոյրն ու գրաւչութիւնը: Կիլիկիան նուաճել այդքան ալ դիւրին բան չէր: Թշնամին շատ երկար ատեն պայքարեւ է որ հասնի իր նպատակին:

Հայ ազգը արդէն մէկ անգամ կորսնցուցած է իր անկախութիւնը բուն Հայաստանի մէջ: Այդ պատճառաւ է որ ամէն կերպով աշխատած է որ չի կորսնցնէ նաեւ Կիլիկիան: Սակայն ամէն բան չէ դասաւորուած հայու կեանքին մէջ ինչպէս հայը կը փափաքի:

Հայը չէր կրնար գործել միայն-

նակ, այն շրջապատուած էր քրիստոնեայ եւ միւսլիման հակառակորդներով:

Շատեր փորձեր են նուաճել Կիլիկիան, բայց միշտ հանդիպեր են Կիլիկիոյ «խրթնահանգոյցին»:

Կիլիկիոյ աշխարհագրական դիրքը, լեռնային կառուցուածքը, շատ մը խոչընդոտներու առջեւ կը գտնէր ինքզինք: Այս պայմաններու տակ, բանակը երբ կու գար Եւրոպայէն կամ Ասիայի Եգիպտական ափերէն, կ'ուղեւորուէր դէպի Ասորեստան կամ Միջագետք (Եգիպտոս հասնելու համար թերեւս) բաւական սահմանափակ հնարաւորութիւն կ'ունենար ձեռքբերել համար Կիլիկիան:

Խաչակիրներու արշաւանքը կու գար Եւրոպայէն եւ Եգիպտոս հասնելու նպատակ ունէր: Խաչակիրներու բանակը պէտք է անցնէր Կիլիկիայէն:

Այժմ խօսինք թեթեւ կերպով խաչակիրներու արշաւանքի բնոյթին եւ նպատակներուն մասին, որպէսզի աւելի հասկնալի ու տեսանելի դառնայ անոնց ազդեցութիւնն ու ընդգրկած ասպարէզը:

Խաչակիրներու արշաւանքները ընդհանուր անունով կը կոչուին դէպի Արեւելք, Եւրոպացիներու ձեռնարկած արշաւանքները, որոնք տեղի ունեցան 1096-1270 ժամանակամիջոցին: XI-XII Դարերուն Քրիստոնէական եկեղեցին հզօրացաւ Արեւմտեան Եւրոպայի մէջ: Մեծ ազդեցութիւն ունէր Եւրոպական ժողովուրդներու եւ պետութիւններու վրայ: Մինչեւ դարի կէսերուն Քրիստոնէական եկեղեցուց պետն էր Հռոմի պապը, իսկ Բիւզանդիոնի մէջ Կոստանդնուպոլսոյ պատրիարքը որը ենթարկուած էր կայսրին: Բիւզանդական եկեղեցին իր ազդեցութիւնը բանեցուցաւ Արեւելեան Եւրոպայի վրայ եւ Եւրոպական որոշ ժողովուրդներ ընդունեցին Բիւզանդական եկեղեցուց գերակայութիւնը: Հռոմի պապը սակայն, կը ցանկար որ իր իշխանութեան տակ դրուէին Եւրոպայի բոլոր եկեղեցիները: Բիւզանդական եկեղեցին կ'ընդդիմանար Պապին դէմ իր գործերուն մէջ միջամտութեան համար:

Քրիստոնէական եկեղեցուց վրայ գերիշխելու եւ եկամուտները կիսելու համար սուր պայքար էր որ մղուեցաւ Պապի եւ Պատրիարքի միջեւ. 1054 թուականին, հերթական տարակարծութիւններու եւ պայքարի ընթացքին պայսն ու Պատրիարքը իրար նզովեցին: (Տես Միջին Դարերի Պատմութիւն, հատոր I, մաս II, Երեւան 1962 թ. էջ 49): Տեղի ունեցաւ եկեղեցուց վերջնական բաժանում, իսկոյց, Արեւմտեանի եւ Արեւելեանի: Այդ ժամանակէն սկսեալ Արեւմտեան եկեղեցին կոչուեցան կաթողիկէ (այսինքն համաշխարհային) իսկ Արեւելեան (ուղղափառ) ճիշդ հա-

Շաք-ը էջ 19

Advertisement for HARUT DER-TAVITIAN, License #0828270, 1807 W. Glenoaks Blvd., Suite 202, Glendale, CA 91201. Includes contact info: Tel: 818/502-3233, Fax: 818/502-3244, Pgr: 818/608-9898, info@excelhye.com, www.excelhye.com. Logo for EXCEL HYE INSURANCE SERVICES, listing services: AUTO • HOME • LIFE • HEALTH • DISABILITY • COMMERCIAL.

**ԱՅԺՄԵԼԿԱՆ ՆԻԹԵՐ**

**ԱՇԽԱՐՀԸ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԵՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴԱՐՈՒՄՆԵՐԸ**

**ՎԱՐԴԱՆ Ա. ՔԶՆՅ. ՏԻԻԼ ԿԷՐԵԱՆ**

Աշխարհ եկեր ես, ըսէ, ի՞նչ կը նախընտրես ըլլալ, ազատ կամ ստրուկ, տէ՛ր կամ ծառայ, անկա՞խ կամ հպատակ: Քեզի կը թողում նախընտրութիւնը, որ համաձայն կոչուածիդ որոշես ապագան:

Կրնաս շատ բարի ու բարեպաշտ մարդ մը ըլլալ եւ հայութեան մէջ զնահատելի ներկայութիւն մը՝ հանրաճանաչ պարտակա՞նութիւններով: Կրնաս ըլլալ նոյնպէս՝ չարակամ ու չարասիրտ՝ նզովուիլ ժողովուրդէն:

Որքան ալ՝ վերոգրեալ հարցումը տարականն ու տարօրինակ թուի, հրատապ հարց մըն է մտածող մարդուն համար, որ իտէ՛լ մը կը հետապնդէ եւ կ'ուզէ հասարակութեան մէջ պատուաբեր անձնաւորութիւն մը ըլլալ եւ ոչ թէ անօգուտ եւ հասարակ մարդ մը:

Հարցումը՝ եղեր է պարզ կամ բարդ՝ պէտք է պատասխան մը տրուի: Այս շփոթ օրերուն՝ շատ են հարցումները, որոնց պատասխան ու բացատրութիւն չի տրուիր, յատկապէս անոնց կողմէ, որոնց շահերը կը պարտադրեն, որ լուռ մնան:

Մարդկային միտքը յոգնած է անձնական հոգերով եւ չ'ուզեր զբաղիլ այնպիսի հարցերով, որոնք չեն շահագրգռեր իրենց պահանջները եւ ակնկալութիւնները:

Աշխարհի համապատկերը՝ համատարած մեր առջեւն է, բազմապիսի իրադարձութիւններով ու բազմացեղ մարդերով: Պարզ ու

յստակ կ'երեւան անոնք, իրենց բնութիւններով եւ սովորութիւններով, գորառնութիւններով եւ յարաբերութիւններով, ծառայութիւններով եւ ապօրինութիւններով, մեղքերով եւ սխալներով:

Այս մարդոցմէ մէկը պիտի ըլլաս դուն մարդկային հասարակութեան մէջ, սիրոյ բարի կամ չար գործերով:

Մեծագոյն եւ մահացու փորձութիւնը որ պիտի գերէ հոգիդ իր շլացուցիչ հրապոյցովը դրամին կուռքն է, սատանային դրամանիշը, որուն ձգողական զօրութիւնը շուարումի պիտի մատնէ քեզ: Կեանքդ պիտի վերածէ սարսափազդու մրցակցութեան մը, հոգեւոր ռազմադաշտի մը, որ պիտի ստուգուի ու վկայուի սրբութեանդ վարկը եւ որակը:

Երկու հակադրուած ուժեր պիտի ճակատամարտին մէջդ, մէկը հրեշտակն է, որ կը պայքարի սատանան խեղդել եւ ազատել քեզ իր կապանքներէն եւ միւսը սատանան, որ կը մաքաւի, որ մնաս Աստուծոյ լոյսէն հեռու, իր խաւարակուռ մթութեան մէջ: Քեզմէ կախում ունի, թէ այս երկուքէն, որուն զօրակից պիտի ըլլաս, հրեշտակի՞ն, թէ՛ սատանային:

Գիտեմ, որ մարդիկ պիտի ուզեն տէր ըլլալ եւ ոչ մէկը ծառայ, ազատ՝ եւ ոչ մէկը՝ ստրուկ, անկախ՝ եւ ոչ մէկը հպատակ:

Մեզմէ ամէն մեկուն կեանքը՝ այնպէս դասաւորուած է, որ պիտի ընեմ, ինչ որ ես կ'ուզեմ՝ եւ պարագաներու բերումով, ինչ որ ուրիշները կ'ուզեն: Այս փոխա-

դարձութեան վրայ՝ երկրի անիւնները կը շարժին ու կ'ապահովեն մարդուն յառաջդիմութիւնը եւ ապահովութիւնը:

Մարդուն մեծ դժբախտութիւնը կը սկսի այն օրէն, երբ չի կրնար համաձայն իր հակումին ու կամքին լուծել իւրապատուկ հարցերը:

Դիւրին չէ ներկայ ապերախտ պայմաններու մէջ, նախասիրութիւններով գործել եւ արդիւնաւորել ձեռնարկութիւններ ու նպատակներ: Ամէն քայլափոխիդ արդէ՛ք մը՝ խուժի պէս կը ցցուի ու կը կասեցնէ խոյանքդ:

Արտաքին միջամտութիւնները եւ հակասութիւնները կը պաշարեն ու կը շղթայեն ուժերդ ու կը կանգնին առջեւդ, որ քայլ մը աւելի չ'յառաջանաս:

Ինչ որ կը պատահի ներկայիս հինգ ցամաքամասերուն վրայ՝ պատերազմն է ճշմարտութեան եւ արդարութեան դէմ, անկասելի պատերազմը, ուր կը գոհուին, ոչ թէ մարդի այլ ժողովուրդներ՝ Հօրներու զօրակցութեամբ, յանուն ռազմավարական սկզբունքներու եւ ազգային շահերու:

Ամէն անլուծելի հարց, քաղաքական եւ տնտեսական՝ կը բերուի մակերեսի վրայ եւ խորքը կ'անտեսուի, որ հարցերը մնան ու բարդանան, եւ երբեք լուծումի չ'յանգին:

\*\*\*

Ազատութիւնը՝ փոքր ու անգոր ժողովուրդներու համար՝ իրենց ամբողջ գոյութեան ընթացքին՝ անհասանելի երազ մը, ցնորք մը եղած է:

Ազատութիւնը՝ սկսեալ մեր հայրենի երկրէն, ոչ մէկ ժողովուրդի կեանքին մէջ չէ գտած տակա-

ւին իր ճշմարիտ բացայայտումը:

Միայն բռնակալները չեն, որ անխնայ խոշտանգած են զայն, այլ այն բոլոր պետական պարագլուխները, որ այսօր՝ մարդկութեան ճակատագրին անպարտելի ԱՌԱՋ-ՆՈՐԴՆԵՐԸ կը հռչակուին:

Ամէն բռնակալի կեանքը մարտիրոսական վախճանով կը բնորոշուի եւ կը չուէ աշխարհէն, պատմութեան էջերուն մէջ թողելով նզովեալ անուն մը:

Բռնատէրը կը դողայ ստրուկէն եւ ստրուկը կը դողայ բռնակալէն: Երկուքն ալ՝ ոչ աւելի եւ ոչ պակաս, կը շնչեն համագիշերային մղձաւանջներով եւ համացերեկային դողեր:

Խաղաղ ու ապահով չեն երկուքն ալ, կը սպասեն յուսավառ, որ մէկը միւսը տապալէ յեղափոխութեամբ:

Բռնակալը եւ ստրուկը արդար չէ կոչել հասարակութեան մէջ՝ ազատ անձնաւորութիւններ:

Ես չեմ կրնար կոչել զանոնք Աստուծոյ ստեղծագործութիւնները եւ ոչ ալ մէկը միուսէն նախամեծար գոյութիւններ:

Այսօր ազատութիւնները, ազատութիւն չեն, այլ խաբկանք, մարդը եւ մարդկութիւնը կը խաբեն նորահնար ճնշումներով:

Մեր տարաբախտ հայրենիքն ալ՝ ազատութեան մէջ ազատ չէ, անասելի զրկուածութեան մէջ կը վայելէ անկախութեան չարիքները:

Հոն՝ կեանքը այն չէ, ինչ որ էր մօտիկ անցեալին: Պակասները եւ պահանջները բերագացած են, անգործութիւնը զազաթնակէտին հասած եւ անտարբերութիւնը կը

Շար.բ էջ 17



**Wahib's**  
MIDDLE EAST RESTAURANT  
الشرق مطعم  
MEDITERRANEAN  
LEBANESE FOOD



**Wahib**

**COME IN AND ENJOY OUR PATIO AND THE FINEST SHISA "HOOKAH"**

**CATERING FOR ALL OCCASION**



**MOUHAMAD SALEM & HIS BAND ~ VARTAN / NAZO & AMIR**

**FAMILY ENTERTAINMENT  
BANQUET HALL  
EVERY  
FRIDAY ~ & ~ SATURDAY  
NIGHT  
INTERNATIONAL ~ ARABIC  
CALL FOR RESERVATION**



**BELLY~DANCING**

PHOTO / CONCEPT- J / D - 2006 ©TEL( 626 ) 795-4493

**910~E.MAIN ST,ALHAMBRA,CA.  
TEL 626-281-1006 626-587-1048  
FAX 626-281-3641**

ԱՐՈՒԵՍ

ՇԱՅ ԵՐԳԻ ԹԱԳՈՒՄԻ ՕՖԵԼԻԱ ՎԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Օֆելիա Համբարձումեան ալբոմ-ժողովածուն բովանդակում է հայ երգարուեստի ամենանշանաւոր դէմքերից մէկի՝ հռչակաւոր երգչուհի, Հայաստանի ժողովրդական արտիստուհի Օֆելիա Համբարձումեանի երգչական մեծ արուեստի բեղմնաւոր գործունէութիւնը:



Գրքի հեղինակ արուեստաբան Սերգէյ Առաքելեանը իր եւ հայ մշակույթի անուանի գործիչների վերլուծութիւններով ներկայացնում է նշանաւոր երգչուհու լայն գործունէութիւնը, նրա բացառիկ ներդրումը հայ երգը աշխարհին տանելու եւ այն տարածելու գործում: Հեղինակի կողմից կազմուած է (առաջին անգամ) Օֆելիա Համբարձումեանի կատարած հարիւրաւոր երգերի ամբողջական ցանկը:

Գրքում տեղ են գտել պատմական արժէք ներկայացնող զանազան լուսանկարներ, ինչպէս նաեւ մեծահամբաւ երգչուհու երաժշտական ընտանիքի անդամների՝ ճանաչուած երաժիշտ-կատարողների՝ Նորայր եւ Յովհաննէս Յովաննիսեանների եւ Չազարի արուեստի հռչակաւոր երգչուհի Տա-

Քոչարը, Հայկանուշ Դանիէլեանը, Սուրէն Քոչարեանը, Դանիէլ Ղազարեանը, լեռագալուստ Գոհար Գասպարեանը, Սիրվա Կապուտիկեանը, Տաթևիկ Սազանդարեանը, Գէորգ Էմինը, Էդուարդ Միրզոյեանը, Ալեքսանդր Յարութիւնեանը, թողնելով սքանչելի երգչուհու բարձրարուեստ կատարումների մասին

Իմ պաշտելի հայ ժողովուրդ, կրկին ու դարձեալ սիրելի իմ ունկնդիր: Երջանիկ եմ, որ հայ երգչուհի եմ, հպարտ եմ, որ բու դուստրն եմ: Արուեստագէտի ամենաբարձր վարձատրութիւնը ժողովրդի սէրն է: Ես երջանիկ եմ, քանի որ տասնամեակներ շարունակ զգացել եմ այդ ջերմ սէրը: Շնորհակալ եմ նաեւ կառավարութիւնից, որը բազմաթիւ շքանշաններով քաջի ինձ շնորհել է նաեւ հանրապետութեան ժողովրդական արտիստուհու կոչում: Խորին խոնարհումով իմ ժողովրդին, իմ ջերմ ու սիրելի ունկնդիրին: Նուիրեալ մուրիւմով եւ միշտ երախտապարտ՝ **Օֆելիա Համբարձումեան**

Թեւիկ Յովաննիսեանի մասին հետաքրքիր նիւթեր:

ԵՐԿՈՒ ԽՕՍԲ ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Օֆելիա Համբարձումեանը մէկն է երաժշտական կատարողական արուեստի նշանաւոր այն անհատականութիւններից, որի գործունէութիւնը շրջադարձային նշանակութիւն ունի հայ երգարուեստի պատմութեան մէջ:

Չնայած այս ամէնին նրա անկրկնելի արուեստը դեռեւս ուսումնասիրութեան առարկայ չի դարձել: Այդ բացը լրացնելու մի համեստ փորձ է ներկայ գիրքալստի:

Ձեռնամուխ լինելով այս անհրաժէշտ աշխատանքին՝ մեր նպատակն է հանրամատչելի ձևով երաժշտասէր ընթերցողին ծանօթացնել անուանի երգչուհու կեանքի եւ կատարողական արուեստի հետ:

Ստեղծագործական երկար ճանապարհին սիրուած երգչուհու մասին գրուել են բազմաթիւ յօդուածներ, ստեղծագործական դիմանկարներ, հարցազրոյցներ, բանաստեղծութիւններ, նամակներ՝ սիրուած Հայաստանում, նախկին Խորհրդային Միութեան քաղաքներում, սփիւռք տպագրուող թերթերում, պարբերականներում, գրքերում:

Սակաւաթիւ երջանիկ արուեստագէտներից է Օֆելիա Համբարձումեանը, որին դեռեւս իր գործունէութեան նախաշէմին նկատելի, սիրելի ու երգի նրա հայցի կատարումը բարձր են գնահատել Աւետիք Իսահակեանը, Երուանդ

Իրենց արժէքաւոր խօսքը:

Ուսումնասիրելով երգչուհու անձնական հարուստ արխիւը (յօդուածներ, գրառումներ, իր մտքերն ու խոհերը, իր կատարած եւ ձայնագրած երգերի ցուցակներ, բանաստեղծութիւններ, նամակներ, վաւերագրեր, բազմաթիւ լուսանկարներ) ես անհրաժէշտ տեղեկութիւններ եմ քաղել նաեւ Ա. Մերանգիւլեանի անուան ժողովրդիչների անսամբլի (նախկին եւ այսօր գործող) երաժիշտ-կատարողների արխիւներից, օգտուել եմ Ե. Հարենցի անուան գրականութեան եւ արուեստի թանգարանի ֆոնդերից, Երեւանի ռատիոյի ձայնագրարանից, թերթի եւ Ազգային գրադարանի մամուլի հարուստ հաւաքածոները (1943-2005 թթ.):

Բնաւ չունենալով ներկայ գիրքալստը գիտական աւարտուն ուսումնասիրութիւն համարելու յաւակնութիւն՝ լիայոյս ենք, սակայն որ այն առիթ կը հանդիսանայ նշանաւոր երգչուհու անգուզական արուեստին համարժէք մենագրութիւն կազմելու համար:

Շնորհակալութիւն բոլոր անոնց, ովքեր նպաստեցին մեր աշխատանքի կազմակերպմանը:

Սերգէյ Առաքելեան  
Արուեստաբան, թատերական արուեստի հանրապետական փառատօնի դափնեկիր  
Օֆելիա Համբարձումեան ալբոմ-ժողովածուն տպուած է հայերէն լեզուով: Ցանկացողները այն կարող են ձեռք բերել սփիւռքի հայկական խանութներից, ինչպէս նաեւ կապուելով հետեւեալ e-mail հասցէին՝ DVMUSIC@AOL.COM կամ այցելելով WWW.DATEVIK.COM

ԿԱԼԿԱԹԱՅՈՒՄ ՏԱՐՈՒԱՅ ԼԱՒԱԳՈՅՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ ԵՄԱՆՉՈՒԵՑ ՅԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԵՄԱՐԱՆԻ ԵՐԳՉԱԽՈՒՄԲ



Դեկտեմբերի 16-ին, Կալիաթայի Ս. Մարիամ կաթողիկոսական դպրոցում տեղի ունեցաւ Ս. Ծննդեան տօնին նուիրուած հոգեւոր երգերի մրցույթ քաղաքի շուրջ 10 քրիստոնէական դպրոցների երգչախմբերի միջեւ: Միջոցառմանը մասնակցում էր նաեւ Հայոց Մարդասիրական ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարութեամբ ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ Տիար Վաչագան Թադեւոսեանի: Մրցույթ-հանդիսութիւնն սկսուեց միասնական «Տէրունական աղօթքով», որից յետոյ Ս.

Մարիամ կաթողիկոսական դպրոցի հոգեւոր հովիւը բարի գալուստ մաղթեց ներկաներին՝ անդրադառնալով քրիստոնէաների համար աչդքան կարեւոր Տիրոջ Ս. Ծննդեան խորհրդի նշանակութեանը: Իւրաքանչիւր երգչախումբ անգլերէն լեզուով կատարեց օրուան խորհրդին նուիրուած երկուական երգ: Արդիւնքների ամփոփումից յետոյ տարուայ լաւագոյն երգչախումբ ճանաչուեց Մարդասիրական ճեմարանինը՝ արժանանալով պատուաւոր առաջին մրցանակին:

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ

Տօքթ. Յովհաննէս Գուլակ Աւետիքեան

- Անունդ է անմահական Մեզ ուղեցոյց, մեր սիրական Արժէքովը քո պատմական Իմ դարաւոր Կեդրոնական
- Բարձր բերող հայապահպանման Դու մեր յոյսն գոյատոււման Արժանի եւ փառաւորման Իմ պաշտելի Կեդրոնական
- Դու մեծ օճախ հայ կրթութեան Դու հիմնաքար իմաստութեան Դու փառքն եւ հայ գոյութեան Իմ սիրելի Կեդրոնական
- Աշակերտներ շարան-շարան Սեղաններու վրայ դարան Գիտութեանց մեծ շտեմարան Իմ ուղեցոյց Կեդրոնական
- Հաստատոււմդ դար մը անցաւ Տեսար հազար տանջանք ու ցաւ Հայ տիպարը քեզմով կրցաւ Հասնիլ գագաթ Կեդրոնական
- Դու ես մեր կեանքի խանձը Ով հայ մշակոյթի գանձը Քեզմէ ուսում առնող անձը Միշտ գագաթն է Կեդրոնական
- Հայապատմիք քեզմով գտաւ գորով Հպարտ է ան, ունի կորով Կ'ուսանի հոն կամքի գորով Նոյնպէս ալ սիրով Կեդրոնական
- Երջանկութեամբ աշակերտել սեղաններու վրայ սերտել եւ ապագան յոյսով կերտել Քեզմով եղաւ Կեդրոնական
- Դու եղար մեզ ուսման նմոյշ Կոմիտասի երգերն անոյշ Միշտ հնչեցին սրտէն քնքոյշ Քո կաճառիդ Կեդրոնական
- Հաստատոււմդ անցաւ դար մը Հայ կրթութեան լաւ արար մը Ազգասիրաց ազդարար մը Եղար դուն Կեդրոնական

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ  
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ  
Enclosed a check for (one year) \* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.  
Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----





### ՎԵՆԵՏԻԿԻ ՎԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՎԱՅ ԼԵՉՈՒԻ ԵՒ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԱՌՆԱՅԻՆ ԽՏԱՑԵԱԼ ԴԱՍԸՆԹԱՑՔ (ՕԳՈՍՏՈՍ 2007)

Վենետիկի Համալսարանի Հայ Լեզուի եւ Մշակույթի ամառնային խտացեալ դասընթացքը, գործակցութեամբ Պո-Արաքս Մշակութային Ընկերակցութեան, տեղի պիտի ունենայ Օգոստոս 1-20: Քննութիւնները՝ Օգոստոս 21ին: Ժամանակը՝ 30-31 Յուլիսին, մեկնում՝ Օգոստոս 22-23ին: Դասընթացքը ունի երեք մակարդակ՝ բացարձակ սկսնակներէ մինչեւ յառաջադէմներ: Դասերը տեղի կ'ունենան Երկուշաբթիէն Ուրբաթ, օրը հինգ պահ՝ առաւօտեան: Դասերուն ներկայութիւնը պարտադիր է: Մասնակցութեան համար պահանջուած նուազագոյն տարիքն է 18: Դիմումները պէտք է կատարել անձամբ եւ գրաւոր, նշելով միշտ հեռախօսի, հեռապատմէնի (ֆաքս) թիւ մը եւ ելեկրոնային փոստի (e-mail) հասցէ մը: Դասընթացքին զուգահեռ տեղի պիտի ունենան մշակութային այլեւայլ ձեռնարկներ:

Այս տարի առաջին անգամ ըլլալով՝ փափաքողներուն, կէսօրէ վերջերը, ձրիաբար պիտի աւանդուին հայկական պարերու եւ հայ խոհանոցի դասեր:

Արձանագրութեան սակն է՝ 670 Եւրօ կամ համապատասխանը՝ տարարժույթով ըստ օրուան սակին: Այս գումարին 450 Եւրօն ըստ պէտք է վճարուի կանխաւ՝ մինչեւ Մայիսի 31ը: Այս թուականէն վերջ ալ սակը 500 Եւրօն պիտի բարձրանայ: Արձանագրութեան մնացեալ մասը կը վճարուի անպայման մուտքի օրը: 10% գեղջ մը կը կատարուի անոնց՝ որոնք նախապէս լաւ արդիւնքով մասնակցած են դասընթացքին, գոնէ երկու անգամ: Նոյն գեղջը կը կատարուի նաեւ միասին յաճախող մօտիկ ազգականներէն մէկուն (ծնողք, քոյր, եղբայր, կողակից): Արձանագրութեան սակը ոչ մէկ պարագայի կը փոխուի եւ կատարուած վճարումը որեւէ պատճառով ետ չի դարձուիր:

Ամէն վճարագիր (չէք) որ պէտք է անպայման դրամատնային եւ միջազգային ըլլայ, պէտք է հասցէագրուի միայն՝ Associazione Padus-Araxes եւ դրկուի՝ Assoc. Padus-Araxes c/o Dip. Studi Eurasiaci - San Polo 2035-30125 Venezia (Italia): Ընդունելի չեն անձնական եւ փոստային չէքերը: Ամէն չէք պէտք է ունենայ դրամատան երաշխիքը եւ յենու բաժնեկից խտալական դրամատան մը: Կը խնդրուի չդիմել դրամատնային փոխանցումի (bank transfer), միջնորդչէքի բարձր սակերուն պատճառով: Ամէն պարագայի դրամատնային բոլոր ծախսերը դիմողին կը պատկանին: Իսկ փոստային ձամբով փոխանցումը պէտք է կատարուի միայն միջազգային փոխադիրներու միջոցով, որ է՝ mandat-poste international/international money-order:

Կ'ընձեռուի բնակութեան հնարաւորութիւն համալսարանական ուսանողատուն մը (Residenza Abazia)՝ պատմական Վենետիկի մէջ, օժտուած խոհանոցային յարմարութիւններու: Յուլիս 30-Օգոստոս 22 ներառեալ, ամբողջ շրջանին համար, բնակութեան սակն է՝ 800 Եւրօ առանձին սենեակի մէջ, 600 Եւրօ երկու հոգինոց սենեակի մէջ: Բնակութեան վճարը ենթակայ չէ օրական հաշուարկումի: Ճաշ մը կամ ընթրիք մը, Համալսարանի սեղանատան մէջ, պիտի արժէ 7 Եւրօ:

Յաւելեալ տեղեկութիւններու համար հեռապատմէնէն +39.041.241.4448 թիւին, կամ ելզիր մը դրկել հետեւեալ հասցէին՝ daniel@padus-araxes.com: Ի հարկին հեռաձայնէն +39.041.2414448 թիւին, Երկուշաբթի եւ Հինգշաբթի առաւօտները ժամը 9:30-12:30, եւ կամ Երկուշաբթի, Չորեքշաբթի եւ Ուրբաթ իրիկունները ժամը 20-22 (Իտալիոյ ժամով): Լաւ ստուգել երկիրներու միջեւ ժամերու տարբերութիւնը: Բացակայութեան պարագային կրկին փորձել եւ յստակ ու հասկնալի լուր մը թողուլ ընկալուչին՝ նշելով անուն եւ հեռախօսի համար: Երբեք չհեռաձայնել Վենետիկի Համալսարանը:

### ԱՇԽԱՐԸ ԿԸ ԿԱՌԱՎԱՐԵՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԴԱՎԻՃՆԵՐԸ

Շաբունակուած էջ 14-էն

բարացուցէ իր հրեշային կերպարը:

Հայրենաբնակ հայը՝ թշուառութենէ մտրակուած՝ երէկուան հայրենասէր հայը չէ: Աչքերը հեռաւոր եւ օտարաբոյր հորիզոններ յարած՝ ապաստան կը փնտռէ, որ ընտանիքը փրկէ հանապազօրեայ ապրուստի նշույթի սահմաններէն:

Շատեր կը նային իրենց շուրջը առանց տեսնելու եւ շատեր ալ կը տեսնեն, առանց նայելու: Ստացիր վիճակ մը, որ ցաւ կը զգաս իրենց տարաբախտ վիճակին վրայ: Ո՞ր իմաստուն մարդը վեր կը նայի եւ հիասքանչ կը դիտէ կապոյտ երկինքը, որ գոց կը թուի իր կեանքին վերեւ:

Արդիապաշտ մարդը նիւթականէն վեր՝ ոչինչ կը տեսնէ երկրի վրայ: Մեղքին գահակալութիւնը կ'իշխէ ամէն տեղ եւ ամէն մարդու վրայ: Նայեցեք, սա աննշան թուշուներուն՝ երամ երամ կենսուրախ կը թուչին եւ իրենց հեշտալուր ճիշերով, ծառէ ծառ կը տաղերգեն արարչագործութեան փառքը:

Ո՞վ կը հոգայ, կը հագուեցնէ եւ կը սնուցանէ գանոնք, կոյր բա՞խտը կամ նախաինամութիւնը: Մարդ ո՞ր աստիճան մտքով, հոգիով, հաւատքով անբանացած պէտք է ըլլայ, որ Տիեզերակային հոգատարութիւնը չտեսնէ անոնց գեղազարդ գոյութեան մէջ:

Տեսէք սա վարդը եւ շուշանը, մի՞թէ անոնց հմայիչ տեսքը եւ անուշահոտ բուրմունքը պերճախօս վկայութիւններ չէ՞ն Աստուծոյ ձեռարուեստին:

Ինչո՞ւ կ'ըսես հիասթափուած

եւ յուսալքուած, որ կեանքը իմաստ եւ նշանակութիւն չունի եւ Աստուծոյ ամենաթանկագին պարգեւը, որ կեանքն է, վաղաժամ վախճան կուտաս անոր:

Մարդ որքան փոքր եւ խոնարհ ըլլայ, արժէք կստանայ, երբ կը դիտես գայն, որպէս Աստուծոյ ձեռակերտը, յաւիտենակամութեան պրիսմակէն:

Բոլոր անոնք, որ մեղքը պաշտած են եւ Աստուծոյ գոյութիւնը ժխտած, պատուհասուած հոգեվարքով՝ աւանդած են իրենց հոգին:

Հիմա, որ հասայ յօրուածիս աւարտին, հայրաբար կը հարցնեմ քեզի եւ կ'ակնկալեմ, որ պատասխանես սրտաբուխ անկեղծութեամբ:

Ի՞նչ տեղ կը գրաւէ Երկնաւոր Հայրը ամենօրեայ կեանքիդ մէջ, առաջի՞ն, երկրորդ, երրորդ, վերջի՞ն, հաւանաբար անկիւն մը բաց տեղ չես թողած Անոր համար, ափսոս քեզի, բիւր ափսոս, երանի այդ ապերախտ սրտով երբեք ծնած չ'ըլլայիր:

Մեծն Աղեքսանդրի խորհրդատուներէն մին, օր մը մօտեցաւ եւ ծանր ամբաստանութիւններ ըրաւ պալատականի մը մասին, որմէ կը նախանձէր:

Թագաւորը իր ափովը գոցեց իր մէկ ականջը եւ պաղարիւն լսեց ամբաստանողը:

Պալատականը գարմանքէ դբդուած, թէ ինչո՞ւ իր մէկ ականջը գոցեց:

- Լսեցի ուշադրութեամբ, ինչ որ ըսիր, բայց մէկ ականջով միայն: Միուս ականջով՝ հիմա պիտի լսեմ ամբաստանեալը, այն ժամանակ պիտի դատեմ, թէ երկուքեդ, ո՞վ իրաւունք ունի:

### ԷՏԿԱՐԸ

Շաբունակուած էջ 16-էն

1995ին էր երբ վերջին անգամ այցելեցի Երուսաղէմ: Ու ամէն անգամ երբ կ'անցնէի հայոց թաղերէն տարբեր յուզում մը կը համակէր զիս: Հոս էր որ հասակ առինք, մեր մանկութիւնը անցուցինք:

Ու օր մը երբ թաղէն կ'անցնէի տեսայ մարդ մը, որ մեծ աստիճանի մը վրայ ելած հայոց թաղի կոտորած լոյսերը նորով կը փոխարինէր:

Պահ մը կանգ առի... յիշեցի մեր մանկական շարութիւնները... Էտկարը, որ ի՞նչպէս պարաստիկի քանի մը քարով նոր լամբերը կը կոտրէր... երբ քաղաքի էլեկտրակապութեան բաժնի պաշտօնեան հազիւ նորոգած լոյսերը՝ հրաժեշտ կու տար հայոց թաղին:

Ու մինչ սուզուած էի յուշերուս մէջ, յանկարծ սթափեցայ քաղցր երագէ մը կարծես, երբ այդ մարդը վար իջած աստիճանէն, սառած վիճակի մէջ հիմա զիս կը դիտէր:

Ու ո՞վ գարմանք էտկարն էր... որ այդ տարին առաջին անգամ ըլլալով այցելութեան եկած էր իր ընտանիքին:

Ողջագործութեան, երեսունեւ վեց տարիներու բաժանումի ցաւին ծանրութիւնը մեր սրտին մէջ:

Հակառակ անոր որ ճերմակը նոր իջած էր գլխուն վրայ, չէր փոխած սակայն իր դիմագիծը: Տարիքը նոր սկսած էր կարծես ակօսներ բանալ դէմքին վրայ:

- Գալէ մեզի երթանք - ըսաւ յուզուած շեշտով մը, - մայրս հիմա որքան կ'ուրախանայ քեզ ալ տեսնելով:

Մանկութեան օրերու քաղցր յուշերը մեր շրթներուն վրայ, մինչ կ'անցնէինք հայոց թաղերէն, կը

մտածէի թէ ի՞նչ բան մղած էր երբեմնի այս չար տղուն յանձնառու ըլլալ թաղի լոյսերը նորոգելու:

Էտկարը, որ կարծես կարգացած էր գարմանքի արտայայտութիւնը դէմքիս վրայ, տարիներու կարօտը սրտին մէջ, պահ մը կանգ առաւ լոյսի մը տակ, ու ձեռքը ուսիս վրայ դնելով, թաց աչքերով ըսաւ.

- Այս թաղը մեր թաղն է, հայոց թաղն է. Հայաստանէն դուրս, հայրենիքէն հեռու... փոքրիկ Հայաստան մըն է այս՝ Երուսաղէմի սուրբ քաղաքին մէջ: Առանձնայատուկ վիճակ ունինք այստեղ, պէտք է գիտակցինք մեր իրաւունքներուն եւ գուրգուրանք մեր ստացուածքներուն վրայ: Տէր կանգնինք մեր դարաւոր իրաւունքերուն, տէր կանգնինք հայոց վանքին, հայոց թաղերուն:

Երէկ չար էինք... չէինք գիտակցիր գուցէ: Բայց Հայրենիքի անկախութիւնը, Արցախի ազատագրութիւնը շատ բան փոխեց իմ մէջ: Կը զգամ հիմա թէ կը պատկանիմ մեծ ազգի մը: Պատկանելիութեան գիտակցութիւնը արմատացած է մէջս: Իմ նախահայրերս 10րդ դարէն եկած ու հաստատուած են այստեղ: Ու ես չեմ կրնար անտարբեր մնալ ու անցնիլ կեանքիս այս «մութ» փողոցներով: Մենք Լոյսը պաշտեցինք... իսկ հիմա...

Թաղերը լուսաւորուած էին. այս անգամ շնորհիւ էտկարի բարութեամբ թէ իր շարութիւններուն մեղքերը մասամբ մը քաւած ըլլալուն համար, կամ գուցէ՞ կերած ծեծերը վերջապէս մարդ ըրած էին հայրենասէր դարձած էտկարին՝ թէկուզ հայոց թաղերէն անդին... հեռաւոր Հոլանտայի մենութեան մէջ:


Կեանքը ինչ խորհուրդներ ունի եւ ինչ խաջօք անակնկալ...:

**ART PHOTOGRAPHY**  
**JACOB DEMIRDJIAN**  
**TEL(626)795-4493**

**ՄԱՐԶԱԿԱՆ**

**ԼԵՒՈՆ ԱՐՈՆԵԱՆԸ ՐԱՅԱՍՏԱՆԻ ԼԱԿԱԳՈՅՆ ՄԱՐԶԻԿ**

Հայ գրոսմայստեր Լեւոն Արոնեանը ճանաչուել է 2006թ. Հայաստանի լաւագոյն մարզիկ: Մարզական լրագրողների ֆեդերացիայի կողմից անցկացուած հարցման արդիւնքում Արոնեանը հաւաքել է 389 միւտոր:



Ընթացիկ տարում Արոնեանը յաջողութեան է հասել մի շարք միջազգային հեղինակաւոր մրցաշարերում, իսկ Հայաստանի հաւաքականի կազմում դարձել է Համաշխարհային օլիմպիադայի յաղթող: Ի դէպ, Արոնեանը Հայաստանի լաւագոյն մարզիկ է ճանաչուած 2-րդ տարին անընդմէջ:

292 միւտորով 2-րդ հորիզոնականն է զբաղեցրել յունահռոմէական ոճի ըմբիշ կարէն Մնացականեանը, որը Մոսկուայում կայացած Եւրոպայի առաջնութիւնում նուաճել էր ոսկէ մետալ: Լաւագոյն մարզիկների եռեակը՝ 254 միւտորով եզրափակում է նոյն Եւրոպայի առաջնութիւնում յաղթող ճանաչուած Ռոման Ամոյեանը:

Լաւագոյն տանեակում տեղ են գտնել նաեւ ծանրամարտիկներ Գէորգ Դաւթեանը, Տիգրան Վ. Մարտիրոսեանը, Մելինէ Դաւուդեանը, հրաձիգ Նորայր Բախտամեանը, ձիւղոյիստ Արմէն Նազարեանը, շախմատիստ Զաւէն Անդրէասեանը եւ բռնցքամարտիկ Հրաչեայ Զաւարեանը:

**ՖԻՖԱ-Ի ԴԱՍԱԽՈՐՄԱՆ ՄԷՋ ՐԱՅԱՍՏԱՆ 123-ՐԴ ՏԵՂՈՒՄ**

Ֆուտբոլի Հայաստանի հաւաքականը ՖԻՖԱ-ի հրապարակած 2006թ. վարկանիշային աղիւսակում գտնուում է 123-րդ հորիզոնականում: Նախորդ ամսուայ համեմատ Հայաստանն առաջադիմել է մէկ հորիզոնականով, թէեւ այս ժամանակահատուածում որեւէ հանդիպում չի անցկացրել:

Աղիւսակը շարունակում է գլխաւորել Պրագիլեայի հաւաքականը: «Եվրո-2008»-ում Հայաստանի մրցակիցներից ամենաբարձր դիրքն ինչպէս միշտ զբաղում է Փորթուգալեան, որը գտնուում է 8-րդ տեղում: Փորթուգալացիներին յաջորդում է Լեհաստանը (24), Սերպիան (33), Ֆինլանտիան (52), Պելճիքան (53), Արգենտինա (125) եւ Ղազախստանը (135):

**ԳՐԱԽՈՒԱԾ ՕՐ**

Յունուար 21, 2007

Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի նախկին Սաներու Միութեան կողմէ

**«ՆՈՐ ՄԵՐՈՒՆՂ»**

**ՇՆՈՒԽՏԱՏԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ**

**CHARTER CABLE 26-ՐԴ ԿԱՅԱՆ**

**(ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԸՐՊԵՆՔ, ԼԱ ԶՐԵՄԵՆԹԱ)**

**ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԺԱՍԸ 10:00-11:00**

**Palm Springs**

**PALM SPRINGS ԱՐԶԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասեւեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, քաթուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

- Վարձման գներն են՝
- Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
- Long Weekend-ների համար՝ \$ 500
- Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
- Մէկ ամսուայ համար՝ \$ 1450



Մանրամասների համար հեռաձայնել՝ **(818) 246-0125**

**ԵՒՐՈՊԱԿԱՆ ՖՈՒԹՊՈՒԼ**

**ԱՆԳՂԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Անգլիոյ ֆուտբոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Չարլըն - Լիվըրփուլ	0-3	Ասթոն Վիլլա - Պոլըն	0-1
Ուիկան Աթլ. - Շեֆիլտ Եուն.	0-1	Էվըրթըն - Չելսի	2-3
Արսենալ - Փորթսմութ	2-2	Ուէսթ Համ - Մանչեսթըր Եուն.	1-0
Նիւքեմսթըլ - Ուաթֆորտ	2-1	Մանչեսթըր Սիթի - Թոթեմհամ	1-2
Ռիտինկ - Պլեյքլըն	1-2	Ֆուլհամ - Միտլըդլաքո	

Առաջատար խումբերու դասաւորումը

Մանչեսթըր Եունայթըտ	18	14	2	2	38-10	44
Չելսի	18	13	3	2	30-11	42
Լիվըրփուլ	18	9	4	5	26-15	31
Արսենալ	18	8	6	4	29-15	30
Պոլըն	18	9	3	6	20-15	30
Փորթսմութ	18	8	5	5	25-16	29
Թոթեմհամ	18	8	4	6	22-22	28

**ԳԵՐՄԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Գերմանիոյկրմանիոյ ֆուտբոլի առաջնութեան 17-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

ՎՖԼ Պոխում - Մեոնշընկլատայախ	2-0	Աախըն - Համպուրկ	3-3
Նիւրնբերգ - Համբուրգ-96	3-1	Տորթուստ - Պ. Լիվըրքուզըն	1-2
Արմ. Պիլըֆելտ - Շալքե	0-1	Հերթա Պերլին - Այնթ. Ֆրանքֆորթ	1-0
Քոթայուս - Շոլթկարթ	0-0	Վարտըր Պրէյմըն - Վոլսպուրկ	2-1
ՖՍՎ Մայնց - Պայերն Միւնիխ	0-4		

Առաջատար խումբերու դասաւորումը

Վարտըր Պրէյմըն	17	11	3	3	47-22	36
Շալքե-04	17	11	3	3	29-17	36
Պայերն Միւնիխ	17	10	3	4	30-19	33
Շոլթկարթ	17	9	5	3	28-19	32
Հերթա Պերլին	17	7	6	4	28-24	27
Պ. Լիվըրքուզըն	17	7	4	6	28-24	25
Նիւրնբերգ	17	4	11	2	21-16	23

**ԻՏԱԼԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Իտալիայի ֆուտբոլի առաջնութեան 16-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Ուտինեզե - Քալիարի	3-1	Ասքոլի - Թորինո	0-2
Ֆիորենթինա - Ա. Սէ. Միլան	2-2	Ինթեր Միլան - Մեսինա	2-0
Քաթանիա - Էմպոլի	0-0	Ռեճինա - Սամտորիա	0-1
Փարմա - Քիեւո	2-2	Լիվորնո - Լացիո	1-1
Սինեա - Աթալանթա	1-1	Ա. Էս. Ռոմա - Փալերնո	4-0

Առաջատար խումբերու դասաւորումը

Ինթեր Միլան	16	13	3	0	34-14	42
Ա. Էս. Ռոմա	16	11	2	3	36-14	35
Փալերնո	16	10	1	5	30-22	31
Քաթանիա	16	6	5	4	21-26	23
Լացիո	16	7	4	5	26-14	22
Աթալանթա	16	5	6	5	25-25	21
Լիվորնո	16	5	6	5	16-19	21

**ՖՐԱՆՍԱՅԻ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Ֆրանսայի ֆուտբոլի առաջնութեան 18-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Նանսի - Մարսել	2-0	Սէն Եթիէն - Վալանսիէ	3-0
Լը Մանս - Թուլուզ	2-0	Նանթ - Պորտո	0-0
Րընէ - Թրուա	1-1	Օքսեր - Լորիան	2-1
Սըտան - Լիլ	2-0	Լանս - Լիոն	0-4
Մոնպէ - Սոչո	3-0	Փարիզ Սէն ժերմէն - Նիս	0-0

Առաջատար խումբերու դասաւորումը

Լիոն	18	16	1	1	39-11	49
Լանս	18	9	6	3	26-19	32
Սէն Եթիէն	18	9	4	5	30-21	31
Լիլ	18	8	6	3	26-16	30
Սոչո	18	8	6	5	21-21	30
Նանսի	18	8	5	5	16-13	29
Մարսել	18	8	3	7	23-18	27

**ՍՊԱՆԻՈՑ ԱՌԱՋՆՈՒԹԻՒՆ**

Սպանիայի ֆուտբոլի առաջնութեան 15-րդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները

Մայորքա - Ռասինկ	1-2	Էսփանիոլ - Ռէալ Մատրիտ	0-1
Սարակոսա - Վալենսիա	0-1	Հուելվա - Սելիլլա	1-3
Տեպ. Քորունա - Աթլէթ. Պիլայա	0-2	Ռէալ Սոսիէտ - Կիմնասթիք	3-2
Վիլլարեալ - Օսասունա	1-4	Աթլէթ. Մատրիտ - Կեթաֆէ	1-0
Լեվանթ - Սելթա Վիկո	1-1		

Առաջատար խումբերու դասաւորումը

Սելիլլա	15	11	1	3	31-15	34
Պարսելոնա	14	10	3	1	33-11	33
Ռէալ Մատրիտ	15	10	2	3	26-10	32
Աթլէթ. Մատրիտ	15	8	3	4	20-11	27
Սարակոսա	15	8	2	5	28-18	26
Վալենսիա	15	7	3	5	20-14	24
Կեթաֆէ	15	6	4	5	11-10	22

### ՎԱՅԱՍԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ

Շարունակում է 1-էն

սարդ եւ խոստմնալից հայ դիւանագետը: Այս առթիւ ան խօսք առնելով սահուն անգլերէնով մը ողջունեց ներկաները: Պրն. Արմէն Լիլիոյեան ամփոփ գիծերով ներկայացուց 15 տարիներ առաջ, պարագաներուն բերումով անկախութիւն ստացած Հայաստանի անցած ուղին եւ ազգային հեռանկարները: Պրն. Ա. Լիլիոյեան բարձր գնահատեց սփիւռքի ներդրումը հայրենաշինութեան գործին եւ յոյս յայտնեց որ ալ աւելի կ'ամրապնդուին Հայրենիք-Սփիւռք փոխ-յարբերութիւնները, տնտեսական եւ այլ բնագաւառներու մէջ: Յարգելի աւագ հիւպատոսն իր ուրախութիւնը յայտնեց որ կը գտնուի Լոս Անճելոսի այս հայաշատ գաղութին մէջ նաեւ ընդգծեց որ բոլորի

համագործակցութեամբ կարելի կ'ըլլայ իրականացնել իր յառաջիկայ ծրագրերը:

Ելուցիկներ ունեցան նաեւ հայրենի եւ ամերիկացի հիւր դիւանագետներ եւ իրենց սրտաբուռի ողջունները փոխանցեցին Պրն. Արմէն Լիլիոյեանին:

Հայաստանի անկախութեան 15-ամեակի առթիւ հռչակագրիներ յղած էին Լոս Անճելոս գաւառի վերահասցու Մայք Անթոնովիչ եւ Գալիֆորնիոյ կառավարիչ Առնոլտ Շուպլինսկի:

Գործադրութեան գեղարուեստական պատշաճ յայտագիր մասնակցութեամբ պարի համոյթի, քառեակի եւ հայկական ժողովրդային գործիքներու անսամպլի:

Ուշ երեկոյեան՝ ներկաները սրահէն բաժնուեցան լաւագոյն տպաւորութիւններով:

### ՅԱՐԳԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ ԳՐՈՂ ԱՐԱՍ ՍԵՓԵԹՃԵԱՆԻ

Շարունակում է 7-էն

յայտնեց բոլորին եւ քաջալերեց, որ մեր երիտասարդութիւնը նուիրեալ ոգիով եւ համբերութեամբ տէր կանգնի մեր հարուստ գրականութեան: Ան յատկապէս շնորհակալութիւն յայտնեց հանդիսավար Հոգձ. Տ. Պարեա Մ. Վրդ. Երէցեանին, որուն անկեղծ բարեկամութիւնը կը վայելէր երկար տարիներէ ի վեր:

Հանդիսավարի հրաւերով բեմին առջեւ շարուեցան Առաջնորդ Սրբազան Հայրը, Առաջնորդական Ընդհանուր Փոխանորդ՝ Հոգձ. Տ. Տաճատ Մ. Վրդ. Երարմեան, Տիկին Սեփեթճեան, յայտագրին մաս կազմողները, Տիարք Երուստի Պապայեան, Անդրանիկ Սարեան եւ Ստեփան Ալաճաճեան, ուր տեղի ունեցաւ գինեձօնը, ցնծութիւն պատճառերով հանդիսականներուն:

Ապա հանդիսավար Հայր Սուրբը հրաւիրեց Առաջնորդ Սրբազան Հայրը որ խանդավառութեամբ եւ ոգեւորիչ խօսքերով խորապէս գնահատեց յոբելեարին երկարամեայ գրական, հասարակական, եկեղեցական եւ ա՛յլ ծառայութիւնները, որոնց համար իր ամբողջ կեանքը նուիրած էր: Նկատի ունենալով, որ մեծարեալին գրական, հասարակական եւ երկարամեայ ծառայութիւններուն յիսնամեակը պիտի ըլլար յաջորդ տարի, յայտարարեց, թէ նոյնպէս Գալաթեան Սրա-

հին մէջ պիտի նշուէր մեծաշուք հանդիսութեամբ: Ենչտեց հոգեւորականին, գրական եւ հասարակական գործիչներուն անձնուէր ծառայութեան կարեւորութիւնը մեր դարաւոր հոգեւոր եւ ազգային ժառանգութեանց պահպանման համար: Սրբազան Հայր այս առթիւ յատկապէս իր գնահատութիւնը յայտնեց յոբելեարի գաւկին՝ Հրաչ Սեփեթճեանին, որ իր հօր շարաւղին կ'ընթանայ եւ օժտուած է մտաւորական ձիրքերով եւ ծառայատիրութեան ոգին: Հրաչ անցնող երեք տարիներէ ի վեր հայրենի բաժնի խմբագիրն է Առաջնորդարանի պաշտօնաթերթ «Մայր Եկեղեցի»ի: Սրբազան Հայրը մասնաւոր շնորհակալութիւն յայտնեց այս բացառիկ ձեռնարկին մասնակցող Թ. Մ. Միութեան, Հ.Բ.Ը. Միութեան եւ Չորք-Մարգարիտի Հայրենակցական Միութեան:

Յարգանքի երեկոն փակուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր գլխաւորութեամբ երգուած Տէրունական «Հայր Մեր»ով եւ «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով:

Հանդիսավար Հայր Սուրբը յայտարարեց, որ հեղինակին «Ժամանակայոց Խոհեր» գիրքը տրամադրելի էր սրահի դրան կողքը:

Տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին ներկաները առիթը ունեցան անձամբ շնորհակցելու յոբելեարը եւ նոյնպէս օրինակ մը առնելու գիրքէն:

### ՎԱՃՆՈՅ ԲԱՌԲԱՐԸ

Շարունակում է 13-էն

ւատք: Բաժանում էն ետք երկու այս եկեղեցիները դարձան ինքնիշխան:

Հոռոմի Պապը երբեք չզգալուց ցաւ ու միշտ փորձեց երկիրներու եւ եկեղեցիներու վրայ տարածել իր իշխանութիւնը: Ամէն միջոցի կը դիմէր իր հեղինակութիւնն ու գերակայութիւնը ընդարձակելու եւ հզօրացնելու: Այսպիսի ծրագիր մըն էր նաեւ խաչակիրներու արշաւանքը կազմակերպելու միտքը:

1095 թուականին, Ֆրանսական կղերմոն քաղաքի մօտ գտնուող ընդարձակ հարթավայրին վրայ, հսկայածաւալ բազմութեան առաջ ելուցիկ ունեցաւ Հոռոմի պապը:

Ան կոչ կ'ուղղէր որ բոլորը սուր կայեն եւ շարժին դէպի Արեւելեան երկիրներ եւ փրկել «Տիրոջ Գերեզմանը» անհաւատներու ձեռքէն: Ժամանակակից ունկնդրողները մեզ կը հարցնեն թէ Պապի ելուցիկը յաճախ կ'ընդհատուէր «Այսպէս Աստուած կ'ուզէ» բացազանչութեամբ:

Ամբողջ Արեւմուտքը սկսաւ խօսիլ Արեւելեան քրիստոնեաներու մասին: Մինչ այդ ոչ մէկուս յայտնի էր անոնց գոյութիւնը:

«Ողբալի Վիճակի», գրաւուած սրբազան քաղաքի, Երուսաղէմի, անհրաժեշտ կը նկատուէր այլեւս, անյապաղ ազատագրել «անհատանէրու ձեռքէն եւ անոնց հասցուցած շարագործութիւններէն»:

«Ի նշան դէպի սուրբ քաղաք» անմիջապէս պատրաստակամութիւն: Ծատերը նոյնիսկ տեղուց վրայ իրենց հագուստներուն վրայ կարմիր կտորներէն խաչեր կարեցին: Հոռոմի պապի ելուցիկը մեծ ոգեւորութիւն ստեղծած էր ժողովուրդին մէջ: Ամբոխին մէջէն բազմահազար մարդիկ պատրաստակամութիւն կը յայտնէին մասնակցելու համար սոյն արշաւանքներուն:

Խաչակիրներու արշաւանքներուն կը մասնակցէին զանազան խաւերէ, եւ դասակարգեղ ժողովուրդ: Եւ պատճառները որոնք գիրքէն կը մղէր դէպի Արեւելք մեկնելու ի հարկէ տարբեր էին:

Հոռոմի պապի ոգեկոչումը ճիշդ ժամանակին, կ'արժեւորուէր: Այս կողմը ետ կը պահէր, Ասպետները իրենց եղբայրասպան կռիւներէն, հզօր ընտանիքներու կրտսերներ կայացուցիչներուն հնարաւորութիւն կու տար հողեր ձեռք բերելու, քանի որ Արեւմտեան աւատատիրութիւնը, չափազանց անողոք էր կրտսերներու նկատմամբ: Հողատէրերու կրտսեր գաւակները որպէս օրէնք, ժառանգութիւն չէին ստանար, բացի ձիերէ եւ գէնքերէ: Հողերը, հարստութիւնը չբաժնուելու համար կը պահպանուէր միաժառանգութեան կարգը: Ժառանգորդը կ'ըլլար միակ աւագ որդին. կրտսեր որդիները կը մնային առանց հողի: Պարապ հողերու

մեծ մասը արդէն կ'օգտագործուէր ցանքադաշտերով, իսկ անտառային գանգուածները մշակման համար: Հողը պիտանի դարձնելու համար շատ դանդաղ եւ երկարատեւ աշխատանքի կը կարօտէր: Այս պատճառով յառաջ եկած էր Ասպետական իւրատեսակ գերբնակչութիւն, որուն նպատակն էր նոր հողեր գրաւել: Այս միտքին կը միանար Արեւելքի առասպելական հարստութիւնները կողոպտելու հեռանկարը: Ասպետները Արեւելքի հարստութիւններու մասին չափազանցուած պատկերացում ունէին: Անոնք պարտքերու տակ դիզուած էին: Արշաւանքը դէպի Արեւելք, յարմար էր նաեւ վարկատուներէն ազատուելու համար:

Այն ասպետները որոնք հողատէրեր չէին, սկսան անապահով վիճակ ստեղծել: Անոնց հիմնական գբաղումը դարձած էր պատերազմը եւ աւագակութիւնը:

Աւատապետներու, թագաւորներու, կոմսերու, դուքսերու համար, Արեւելքի գրաւումը, կարծէք իրենց կը խոստացուէր, տիրապետութեան ընդարձակումը եւ իրենց քաղաքական ազդեցութեան ուժեղացումը եւ եկամուտներու բարգաւաճումը:

Մեծ աւատապետներ կ'երագէին Արեւելքի հարուստ հողերուն վրայ, Եւրոպական աւատատիրութիւնը սեփականացնելու եւ հիմնել իրենց ենթակայ պետութիւններ:

Միայն առասպելները չէին որ կը ձգտէին դէպի Արեւելք: Այս շարժման մէջ մեծ դեր կը կատարէին քաղաքները, մասնաւոր իտալական ձենովան, Պիզան, Վենետիկը: Ասոնց համար արշաւանքները դէպի Արեւելք առեւտրական մեծ շահ կը ներկայացնէին: Քանի որ Սելճուք-թուրքերուն նուաճումները խանգարած եւ թոյլցուցած են Արեւելքի հետ առեւտրական կապերը ուստի առաջաւոր Ասիայի տարածքներուն վրայ, ուղղակի գրաւումը պէտք է ամրացնել, իտալական քաղաքներու հետ, որպէս Արեւելքի եւ Արեւմուտքի առեւտրական, առեւտրի, միջնորդի դեր կատարողներ: Իտալիոյ առեւտրական քաղաքները կը ձգտէին Միջերկրական ծովի Արեւելեան մասին դուրս բերել իրենց վաղեմի մրցակից Բիզանդիոնը եւ իրենց իշխանութիւնը տարածել, այդ շրջաններու մէջ, որ տուեալ պայմաններով, հնարաւոր էր միայն գինուած ոչ թ գործադրել: Այս ամէնը իտալական քաղաքներուն կը դրդէր մասնակցելու խաչակիրներու արշաւանքներուն համար: Որովհետեւ անոնք կրնային կազմակերպել խաչակիրներու գէնք եւ ապրէն մատակարարելու գործը. երկրորդ, կրնային օգնութիւն տրամադրել Արեւմուտքէն ծովուն վրայէն աշխարհագործերու փոխանցումը:

(Շարունակելի 1)

### ՅԱԻԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱՐՓԻՆԷ ՀՈՐԱԼԵԱՆ-ՏԻԻԶԵԱՆԻ մահուան տիուր առիթով Սահակեան-Լեւոն Մկրտիչեան Գոլէճի Սանուց Միութեան վարչութիւնը իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան բոլոր պարագաներուն, մասնաւորաբար՝ Չարմինէ Սահակեանին:

### ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկանաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ ապա առաքեցէք հետեւեալ հասցեով  
G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

### ԱՃԻԱՏԱԻՈՐՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ

Փասատիւնայի մէջ հաստատութիւն մը կարիք ունի աշխատաւորուիկներու cash register-ի վրայ: Հեռաձայն՝ (626) 833-2331



**Jessica Demirdjian**  
Realtor®



**Prudential**

California Realty  
9915 Mira Mesa Blvd., Suite 100  
San Diego, CA. 92131  
Bus: 858.653.6400  
Fax: 858.653.6440  
Cell: 619.846.7738  
Cell: 760.622.6873  
jessicad@prusd.com

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԻՒՆ ■ ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION



Բեղմնաւոր Անցեալ, Լուսաշող Ապագայ:  
Proud Past, Exciting Future.



# NEW YEAR'S EVE DINNER-DANCE

ORGANIZED BY AGBU - AYA GLENDALE-PASADENA CHAPTER

## ENTERTAINMENT & SURPRISES

**SUNDAY, DECEMBER 31, 2006 – 8:00PM**

AGBU ALEX MANOOGIAN CENTER  
2495 E. MOUNTAIN STREET, PASADENA, CA 91104

*Music by DJ Heartbeat • Catering by La Fogata*

Special Program and Menu for Children in a Separate Hall

Adults \$75 / Children 12 and under \$35 / Children 5 and under Free

**RSVP - LIMITED SEATING**

*Call the AGBU Alex Manoogian Center (626) 794-7942*

### AGBU 2007 SUMMER INTERN PROGRAMS

IN

NEW YORK,

PARIS

AND NOW YEREVAN

SUMMER INTERNSHIP APPLICATIONS BEING ACCEPTED NOW.  
FOR MORE INFORMATION, EMAIL [NYSIP@AGBU.ORG](mailto:NYSIP@AGBU.ORG)

#### AGBU CENTENNIAL SPONSORS



6131 E. Telegraph Rd. • Commerce, CA 90040 • 323.721.2100 • 714.879.2100 • [commercecasino.com](http://commercecasino.com)



Bank of Orange County is a full service bank prepared to meet the needs of both small and large businesses.

BANK of ORANGE COUNTY



FEDIC

A Division of Placer Sierra Bank

Commercial Real Estate  
Term Loans and Lines  
Free Business Checking  
High Rate Money Market

**Contact:**  
Gus Ghusayni  
Senior Vice President  
411 N. Central Avenue  
Glendale, CA 91203  
[bankoforangecounty.com](http://bankoforangecounty.com)  
(818) 548-2720